

Սերգեյ Ա. Աղաջանյան
Բանաս. գիտ. դոկտոր

ՀԻՄԱՐՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆՆ ԸՍՏ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ*

Բանալի բառեր - հիմարություն, մարդագիտություն, հասարակագիտություն, անհատական հիմարություն, համակեցական հիմարություն, մտավոր առաջադրանք, ռեֆլեքսիա, մտավոր մրցակցություն, կոնֆորմիզմ, բախտ, երգիծանք, կենսորոշում:

Մուտք

Հովհ. Թումանյանն իր հայ լինելը գիտակցող մարդու ողջ կյանքի ուղեկիցն է, բայց ոչ միայն նրա համար, որ գրել է մեծից-փոքր բոլորին վերաբերող թեմաներով: Այլ առաջին հերթին մարդկային իր էությունից գրականություն բերած այն բացառիկ որակների շնորհիվ, որոնց բուժիչ-վերականգնող կարիքն ունի ինքն իրենից ու աշխարհից խռոված, ամենքից և ամեն ինչից դժգոհ հայ մարդը: Թումանյանը կարողացել է նույնիսկ ամենաճշմարիտ առօրեականության շուրջ զրուցել տիեզերական բարձունքներին բնորոշ իմաստությամբ՝ այդպես կյանքն իմաստավորող լույս արարելով անգամ իր տառապանքից:

Նրա հոգեմտավոր կեցությունն իմաստավորված է եղել որքան մեր ինքնության բաղկացուցիչները՝ «կան ու չկան» (Հովհ. Թումանյան), այնքան էլ անհունի խորին խորհուրդները պեղելով: Ու դժվար է ասել՝ այդ ամենի մեջ Հովհ. Թումանյանի ազնվականությունն է նրա հանճարեղության զարդը, թե՛ հակառակը: Մի խոսքով՝ ոգեղեն խրախճանքի հանճար, ում զրուցընկերն Աստված է, և որի սեղանի տոնական առատությունը միշտ մատչելի է հատկապես ինտելեկտուալ և գեղագիտական բարձրաճաշակ սննդի հարգն իմացողների (զարմանալիորեն նաև՝ չիմացողների) համար:

Ժամանակներ են փոխվելու, սերունդներ են անցնելու, բայց Հովհ. Թումանյանը մնալու է: Այս մասին շատ ու հիմնավոր է ասվել: Ու որքան իրենից չհեռանանք, այնքան երաշխավորված է լինելու մեր ընթացքը ժամանակի մեջ: Եվ դա շնորհիվ նաև այն իրողության, որ նրա բազմաժանր ժառանգության առանցքնե-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12. 08. 2019:

րից մեկն էլ հայտնություններով լի մարդագիտությունն է: Այդ թվում նաև՝ մարդու հիմարության ֆենոմենը:

Դեռևս անիմանալի ժամանակներից է նկատվել, որ իր ռացիոնալությամբ մեծամտացած մարդուն շատ բնորոշ է հենց ամենաանհավանական թվացող՝ հիմարությունը: Ուղղակի ամեն անգամ ծիծաղելով հիմարների ու հիմարության վրա՝ յուրաքանչյուրը կարծել է, թե դա չի կարող բնորոշ լինել հենց իրեն, ինքն այդպիսին լինելուց պաշտպանված է խելոքությամբ: Մինչդեռ բոլոր ժամանակների մարդու վարքագիծը, կենսակերպն ու իրականությունը լի են հիմարության փաստերով, ինչը ցույց է տալիս նաև Հովի. Թումանյանը՝ ստեղծելով խորհրդանիշ կերպարների և կենսական հանգամանքների հետաքրքիր մի բազմազանություն: Եվ որովհետև դա ասողը Հովի. Թումանյանն է, ուրեմն...

Անեղր ու անհատակ օվկիանոս է Հովի. Թումանյանի աշխարհը: Եվ դրանով՝ որքան հրապուրիչ, նույնքան էլ... վտանգավոր: Առավել ևս, երբ չես փորձում նրա մարդագիտության մեջ հիմարության ֆենոմենի արծարծումներին մոտենալ ժամանցային, թեթև հաճույքի տրամադրվածությամբ: Այդ դեպքում ինքնին բարդ խնդրին ավելանում է նաև ողջախոհության տագնապը: Շատ հայտնիներից է հնարավոր այդ տագնապի էությունը պարզաբանող խոսքեր վկայակոչել, բայց այս դեպքում լսենք Ռ. Մուզիլի բացատրությունը.

1. Հիմարության մասին խոսել ցանկացողին կարելի է մեղադրել պատմական էվոլյուցիայի ընթացքը պղտորելու հավակնության մեջ:

2. Եթե ինչ-որ մեկը ցանկանում է խոսել հիմարության մասին կամ էլ ինչ-ինչ օգուտ ակնկալել նման դատողություններից, ապա պետք է սկսի այն հիպոթեզից, որ ինքը խելոք է, թեև նման հայտարարությունը համարվում է հիմարության դրսևորում¹:

Այս ամենի գիտակցումով հանդերձ՝ մեծ է հրապուրանքը՝ տեսնելու և ճանաչելու մարդուն այնպես, ինչպես Հովի. Թումանյանը:

1. Նորին մեծություն հիմարությունը

Կան մարդուն և համակեցությանը վերաբերող բաներ, որոնց մասին խոսելը դժվար է: Այդ դժվարության կարևոր մի պատճառն էլ այն է, որ ենթադրում է ռեֆլեքսիա՝ ինքնամեծարանքի, ինքնահիացման էյֆորիայի ոչնչացման հավանական ելքով: Նման արդյունքով քննելի իրողություններից մեկն էլ մարդու անհատական և սոցիալական կեցությանը բնորոշ այն նկարագիրն ու վարքագիծն է, որն ընդունված է անվանել հիմարություն²:

1 Տե՛ս **Музилъ Р.**, О глупости, www.my-works.org/text_25865.html (մուտք՝ 16.12.2018):

2 Տարբեր լեզուներում «հիմարություն» բառն ունի բառարանային իմաստի հարուստ հոմանիշություն, որը մեկտեղված է ներկայացնում իրողության ինչպես բնագիտական, այնպես էլ հասարակագիտական երեսները: Նույնքան հետաքրքիր են այդ բառի նաև նախնական իմաստները: Օրինակ՝ հայերենում այն ստուգաբանվում է պարսկական, ասորական, պահլավական զուգահեռ տարբերակներով, իսկ բառարմատը նույնական է արաբերենի «էջ»՝ **هجم** բառին: Ռուսերենի «глупость»-ը ձևավորվել է «глуп» արմատով, որը նշանակում է «դատարկ»: Անգլերենի «stupidity»-ի արմատը

մինչ նրա տեսակետներին անցնելը որոշակիացնենք հիմարության մշակութաբանական ըմբռնումը:

Իսկ դրա համար, ինչպես որ ճիշտ նկատվել է, նախ պետք է ազատագրվել «մարդասիրական նախապաշարմունքներից⁴», այլապես անհնար կլինի ռեֆլեքսիայի այն չափաբաժինը, որով կարող ենք ինքներս մեր տեսակի վերաբերյալ օբյեկտիվ իմացություն ձևավորել: Հետո՝ պետք է նկատի ունենալ կենսական այն ճշմարտությունը, որ հիմարության վերաբերյալ դատողություններում անխուսափելի է խառնաշփոթը, եթե ինքնին անհույս հիմարներին չտարբերակենք հիմարացվածներից: Ինչ-ինչ կենսական հանգամանքներում հիմարացված կարող է լինել յուրաքանչյուրը, բայց դա դեռ չի նշանակի, թե նա հիմար է ընդհանրապես: Մինչդեռ կան շատ բաներ, որոնք հանրության կենցաղային իմացության մակարդակում են, և հիմարության դրսևորման տարբերակներից մեկն էլ սրանց չիմացությունն է: Որոշակիացնելու համար քննվելիք նյութը՝ ասեմ, որ Հովհ. Թումանյանի հերոսների մի մասը հենց այդպիսիք՝ ինքնին հիմարներ են:

Հիմարության տիրույթում է նաև հիմարանալու մարդկային հակում-նախատրամադրվածությունը: Դա հաճախ դրսևորվում է սուբյեկտիվ շահի, կոնֆորմիզմի, առանց գլխացավանքի ապրելու, ցանկալին իրականության տեղ ընդունելու ինքնախաբեության տրամադրվածության և այլ շաղախների զուսավորումներով: Մեր ժամանակները դրա լավագույն ապացույցն են: Մարդու այդպիսի նկարագիրը ձևավորվում է պրոֆեսիոնալների ջանքերով, լրատվամիջոցներով, մեդիատարածքներով, կուսակցությունների, անգամ կառավարությունների նպատակադիր աշխատանքով: Մանիպուլյացիաները, հոգեբանական ներագդման միջոցները, հնարամիտ խաբեությունը կայացնում են մեծամասնության կամ հանրային գիտակցության, կարծիքի ու վարքագծի այն տարբերակը, որը կարող է մի բնորոշում ունենալ՝ հիմարություն: Այդ որակի կրողը վաղուց հայտնի է իր անունով ու էությանը՝ ամբողջ⁵: Սրան շատ բնորոշ է չարագործության տանող անսխալականության ու արդարության հիպոտիկ համոզմունքը, որի վտանգավորությունը պայմանավորված է վճռորոշ մեծամասնություն ձևավորելու կարողությամբ: Դա, ինչպես քիչ առաջ ասացի, արդյունքն է նաև մի շարք սոցիալական ինստիտուտների նպատակադրված գործունեության, որը կարող է հանգեցնել «հիմարության սոցիալական պայթյունի» (Յ. Դրբրովսկի): **Պատահական չէ, որ մասսաների հիմարությունը գնահատվում է որպես սոցիալական աղետալի հիվանդություններից մեկը. չէ՞ որ հայտնի կենսափորձային ճշմարտություն է, որ որոշների իշխանությունը մյուսների հիմարության կարիքն ունի⁶:**

org/science/Glupost.htm (մուտք՝ 06.08.2018)., Гуревич П., Глупость-родная сестра абсурда, «Философия и культура», 2014 N 5, <https://elibrary.ru/item.asp?id=21587291> (մուտք՝ 27.07.2019)., Спиров Э., Разум в окоме глупости, «Философская антропология», 2017, т. 3, N 1 և այլն:

4 Добровольский Я., նշվ. աշխ.:

5 Տե՛ս Լեբոն Գ., Психология народов и масс, М., 1995.

6 Այս միտքը գերմանացի հակաֆաշիստ, բողոքական հոգևորական Դիտրիխ Բոնյոյֆերինն է, ով 1945 թ. սպանվեց համակենտրոնացման ճամբարներից մեկում: Նա իր դառը փորձով էր հանգել ասված ճշմարտությանը: Նրա խոսքում մարդկային հիմարության վերաբերյալ կան այլ կարևոր մտքեր ևս, որոնց մի մասը ներկայացնում ենք ռուսերենից ազատ թարգմանությամբ: «Ուշադիր դիտարկման դեպքում պարզվում է, որ արտաքին իշխանության (լինի քաղաքական, թե կրոնական) յուրաքանչյուր հզորացում մարդկանց զգալի մասին վարակում է հիմարությամբ:

Հիմարացված լինելու տարբերակը գիտակցաբար նախընտրողներն այդպես ապրում են այնքան ժամանակ, քանի դեռ կոնֆլիկտ չի ձևավորվել իրենց շահի և կոնֆորմիզմի միջև այն աստիճան, որ հարմարվելը դառնա անտանելի: Այդպիսին է մարդկության մեծամասնությունը, որի զգալի մասին ինքնին կամ անհույս հիմար չես անվանի, որովհետև ունի խելոք լինելու չափ մտավոր կարողություն, բայց գերադասում է հիմարացած լինել:

Մինչդեռ շրջահայաց ողջախոհը պաշտպանված է ինչ-որ բանից տպավորվելով ու ներշնչվելով ամբոխվելուց՝ հակառակ այդ ընթացքում նույնիսկ արհամարհված ու մարգինալացած մնալու վտանգին:

Կարծում եմ՝ սխալված չեմ լինի, եթե այսքանը հաշվի առնելով՝ փորձեմ մարդու և մարդկային խմբերի վերաբերյալ ճանաչողական-գնահատողական մոտեցումները որոշակիացնել հետևյալ կերպ: Եթե մեկն է ինչ-որ բան ասում, ապա պիտի հասկանալ, թե ինչ է ասում: Եթե փոքր խումբ մարդիկ են նույն բանն ասում, ապա պիտի նաև ճշտել, թե ինչու են ասում: Իսկ եթե շատ-շատերն են համախումբ դարձած (ամբոխ) նույն բանն ասում, ապա պիտի նաև ճշտել, թե ով է նրանց... հիմարացրել: Այլապես վերջին դեպքի համար օրինաչափ չէր լինի մեծամասնության ճնշմամբ տեղի ունեցող փոփոխություններին հաջորդող մասսայական հիասթափությունը, ապատիան, փախուստը կենսական խնդիրներից և այլն:

Հակառակ սկզբունքային խելոքության և խելոք կոնֆորմիզմի (հիմարանալու նախատրամադրվածություն)՝ ինքնին հիմարությունն անփոխելի հոգեմտավոր վիճակ է, մարդկության հսկայական քանակի համար կանխորոշված ճակատագիր:

Պատմության հոլովույթում հիմարության սկզբնավորման վերաբերյալ կարծում եմ՝ կարելի է առաջարկել այսպիսի հիպոթեզ: Հավասար չափով իմացողների և կարողացողների, նույնն է թե՛ չիմացողների և չկարողացողների համակեցության մեջ չի կարող որևէ տարբերակով հիմարության դրսևորում լինել: Նրա ծագումը պիտի փնտրել մարդու նախնական մշակութաստեղծ գործունեության մեջ, երբ հավասար չափով իմացողների կամ չիմացողների համակեցության մեջ ինչ-որ մեկը հանկարծ հասկացել-լուծել է չիմացության դաշտից ինչ-որ խնդիր: Ահա այդ պահից էլ ձևավորվել է իմացող-կարողացողների և չիմացող-չկարողացողների մի տարբերակվածություն, որի երկրորդ բաղադրիչի մշտական բնութագրերից մեկն էլ լինելու էր հիմարությունը: Ընդ որում, հիմար կարող է լինել

Տպավորություն է ստեղծվում, որ դա ուղղակի սոցիոլոգիական և հոգեբանական օրենք է: Որոշների իշխանությունը մյուսների հիմարության կարիքն ունի: Խնդիրն այն չէ, որ դեգրադացվում կամ ոչնչանում են մարդկային ինչ-ինչ (ասենք՝ ինտելեկտուալ) կարողությունները, այլ այն, որ ամենակործան իշխանության հանդիսավորությունից ձնշված անհատականությունը զրկվում է ներքին ինքնուրույնությունից և ավելի կամ պակաս անգիտությամբ հրաժարվում ստեղծված իրավիճակում սեփական դիրքորոշումը ճշտելուց: ... Խոսելով հիմար մարդու հետ՝ ուղղակի գզում ես, որ հարաբերվում ես ոչ թե նրա անհատականությանը, այլ նրան գերած կոչերին ու լոզունգներին: ... Դառնալով կամագուրկ գործիք՝ հիմարն ի վիճակի է ցանկացած չարիքի՝ միաժամանակ նաև չգիտակցելով դրա չարիք լինելը»:

Տե՛ս <https://www.protestant.ru/news/analitics/review/article/67320/> (մուտք՝ 29.05.2019):

ինչպես հանրությունը, այնպես էլ՝ անհատը՝ նայած իմացող-չիմացողների տոկոսային կամ վիճակագրական փոխհարաբերության:

Ասվածը ցույց է տալիս, որ հիմարության առկայությունը ճշտող լակմուսի թուղթը համադրությունն է: Համադրելի միավորները կամ ներհանրությամբ են (սոցիալական խմբեր, անհատներ և այլն), կամ էլ՝ ամբողջական հանրություններ⁷: Իհարկե չի կարելի մտածել, թե հնարավոր է հանրություն, որում բոլորը հավասարապես հիմար լինեն: Սակայն լիբերալ աշխարհայացքը մարդու դեմոկրատական ազատությունների տարբերակով վաղուց արդեն օրինականացրել է «Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ» կարգախոսը, որը, հակառակ տարածված թյուրմեբնման, բոլորովին էլ չի նշանակում արդար, իմաստուն վճիռ, այլ մատնանշում է իրերի օբյեկտիվ վիճակը կամ ժամանակակից տերմինաբանությամբ ասած՝ մեծամասնության տեսակետը: Եվ հենց այդտեղ է, որ դրսևորվում են համակեցությունների իմացականության միջինացված, գերակայող մակարդակները, որոնց համեմատություն-համադրություններն էլ որոշակիացնում են, թե որոնք են իմացող-խելոքների և չիմացող-հիմարների հանրությունները:

Հիմարության առկայության որոշակիացումն անհնար է նաև առանց դիտորդ-գնահատող հայացքի: Գեղարվեստական գրականության մեջ այն կայանում է տեքստի հեղինակի միջնորդավորված (իրեն փոխարինող ինչ-որ հերոս) կամ անմիջնորդ գնահատողական վերաբերմունքով: Վերջին տարբերակն անպայման չի ենթադրում տեքստում հեղինակի կերպարավորված ներկայություն: Այն ավելի հաճախ արտահայտվում է շարադրանքի լեզվաճանաչական ինչ-ինչ հնարքների գործադրումով, ներկայացվող կենսական իրավիճակները՝ որպես ողբերգություն, երգիծանք կամ զավեշտ իմաստավորումով: Գեղարվեստական այս պայմանականությամբ հեղինակը դրսևորում է գնահատողական վերաբերմունքն իր արտացոլված իրականության նկատմամբ: Իսկ որ ավելի ճիշտ է՝ վերաբերմունքն իր ստեղծած վիրտուալ իրականությունը (գեղարվեստական տեքստ) լցնող կենսական հանգամանքների և բնակիչ-կերպարների նկատմամբ: Ասեմ, որ այս ամենի առարկայացումների օրինակները կդիտարկվեն Հովի. Թումանյանի համապատասխան ստեղծագործություններով:

Հիմարությանը և հիմարին բնորոշող իրողությունները գոնե համառոտ ներկայացնելուց առաջ ճշտեմ, թե ի վերջո ինչ է հիմարությունը: Մարդու նկարագիրն ու վարքագիծը քննելիս պետք է կարևորել և՛ կենսաբանական, և՛ գիտակցական գործոնները: Առաջինը սովորաբար անտեսվում է, թեև ակնհայտ է, որ գիտակցական հնարավորությունները ձևավորվում են կենսաբանական պոտենցիալի բազայով և ընձեռած հնարավորությունների սահմաններում: Հիմարության հիմնախնդիրն էլ քննելի է այդ շրջանակներում⁸: Չի կարող հիմար չլինել

7 Տե՛ս **Комаров С.**, «Патология» русского бытия, или русская глупость, «Вестник пермского университета», 2014, N 2.

8 Նեղ մասնագիտացումը, որը բնորոշ է հատկապես մեր ժամանակներին, մարդուն ազատում է կենսական բազմազան խնդիրներ լուծելու, բազմակողմանի մտածողության անհրաժեշտությունից: Դրա արդյունքում տեղի են ունենում կենսաբանական անցանկալի փոփոխություններ: Մասնավորաբար, ըստ մասնագետների, վերջին մի քանի հարյուր տարում եվրոպացու ուղեղի կշիռը նկատելիորեն պակասել է: Կյանքը ցույց է տալիս, որ նեղ մասնագիտացման արդյունքում մարդը զրկվում է թզախտենցիալ խնդիրների հաղթահարման հնարավորությունից, հարմարվողականությունից:

յուն է, այլ հիմարն ընդհանրապես, նա է, ում նկարագիրն ու կենսակերպն այլ, ավելի դիպուկ բնորոշում չի կարող ունենալ: Իսկ հիմարությունը չիմացության արդյունքն է:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ նաև, որ հիմարության վերաբերյալ ասվածը հարաբերական կողմնորոշիչ է: Որովհետև հնարավոր չէ որոշակիացնել մտավոր կարողությունների այն չափաբաժինը, որից ցածր մակարդակի արդյունքը հիմարին բնորոշ միտքն ու վարքն է, կենսակերպը: Մանավանդ որ նորագույն ժամանակներում կտրուկ ընդգծվել է ինտելեկտուալների ու ոչ ինտելեկտուալների տարբերությունը: Իսկ դա տանում է նրան, որ նույնիսկ բանիմաց, իր մասնագիտական գործունեության մեջ հմուտ մարդը կարող է ինտելեկտուալի կողքին ընդհանուր իմացականության առումով հայտնվել հիմարի վիճակում: Էլ չեմ ասում մարդկանց մեծամասնության մասին, որն իրեն երբևէ չի ծանրաբեռնում մտավոր շատ թե քիչ լարում պահանջող որևէ հոգսով, գործունեությամբ:

Պետք է հաշվի առնել նաև, որ հիմարության հակակշիռը գրագիտությունը չէ, ինչպես կարող է թվալ: Նրա հակակշիռը ողջախոհությունն է, անալիտիկ միտքը: Սրանք են այն գործիքները, որոնք հնարավոր են դարձնում ոչ ստանդարտ, մինչ այդ անծանոթ իրավիճակներում ստեղծագործաբար գործադրել գոնե սոցիալական փորձով ձևավորված իմացությունը:

Ուրեմն հիմարությունը կարելի է ներկայացնել նաև որպես ողջախոհության պակաս, իբրև հանրամատչելի սոցիալական փորձի գոնե նվազագույնից անտեղյակություն: Բոլոր դեպքերում հիմարությունը խելքի պակասությունն է և ոչ թե բացակայությունը, որովհետև երկրորդ դեպքում մտածական գործունեությունը բացառվում է:

Հիմարը չգիտի, որ ինքը հիմար է: Դրանից է, որ բոլոր ծախողումների պատճառները փնտրում է ամեն ինչի ու ամենքի, բայց միայն ոչ իր մեջ: Ինքնահիացումը նրա նկարագրի գլխավոր բնութագրերից մեկն է¹²: Իսկ կյանքը հիմարին դիրքավորում է սովորաբար երկու տարբերակով. նա կամ ականա ծաղրածու է, կամ էլ ինքնագոհ, ինքնավստահ, անսխալականության համոզմունքով մեծամտացած չարագործ, որի արարքների հետևանքները հաղթահարելու պարտականությունը միշտ մնում է խելոքին:

Հայտնի է, որ հիմարին բան հասկացնելու փորձը, նրա հետ զլուխ դնելը, ընկերություն անելը ոչ միայն անիմաստ են, այլ նաև հղի լուրջ և անկանխատեսելի վտանգներով: Բայց համակեցական զավեշտալի անխուսափելիություններից մեկն էլ հիմարի հետ չհարաբերվելու կամա-ակամա անհնարինությունն է:

Հիմարությունը կայանում է այն ժամանակ, երբ ինտելեկտուալ համապատասխան կարողություններից զուրկը ստիպված է մտածել¹³: Հետևաբար հի-

12 «Բայց էլ ու՞մ, եթե ոչ Հիմարությանը, ամենից ավելի է պատշաճում լինել սեփական փառքի թմբկահարը և սրինգով նվազակցել ինքն իրեն» (**Ուտերդամցի Է.**, Գովք հիմարությանը, Եր., 1964, էջ 16):

13 Խոսքն այստեղ ինտելեկտուալ բարդ, պրոֆեսիոնալ գործունեության մասին չէ: Մի բան, որ կարող է մարդկության փոքրամասնությունը, և ակնհայտորեն չի կարող ոչ ինտելեկտուալ մեծամասնությունը: Բոլոր ժամանակների մարդկությանը բնորոշ է այս ճշմարտության անտեսումը, որովհետև որքան հեշտ է գիտակցելը, որ, օրինակ, կոշիկ կարելը որոշակի կարողություն ու իմացություն է պահանջում, ապա նույնքան էլ դժվար է գիտակցելը, որ միտք արտադրելը միակ բարձրագույն և ամենարժեքավոր այն գործունեությունն է, ինչը կարող են միայն քչերը:

Արարչությունից անհիմանալի ժամանակներ են անցել, բայց մարդու էությունը չի փոխվել, նրա մեջ ամենայն հավանականությամբ չի փոխվել նաև հիմարության ու խելոքության փոխհարաբերության չափաբաժինը: Դրանում համոզվելու համար բավական է միայն տեսնել, թե ում է մեծարում, ֆետիշացնում և ընդօրինակում ժամանակակից աշխարհի դիմագիծը ձևավորող մեծամասնությունը՝ «ձայն բազմաց»-ի կրողը:

*
* *

Մարդուն, նրա մտավոր ու ֆիզիկական գործունեությանը բնորոշի վերաբերյալ որևէ քննարկում չի կարող շրջանցել ինչպես ողջախոհության ու հաջողությունների, այնպես էլ հիմարության ու ձախողումների դրսևորումները, դրանց պատճառների հարցը: Այդ առումով, իհարկե, պատահական չէ հիմարությանն անդրադարձների հաճախականությունը մեր ամենօրյա զրույցներում, էստրադային ժանրում, գրականության ու ժողովրդական բանահյուսության, փիլիսոփայության մեջ: Դա նույնքան օրինաչափ է նաև իմաստախոս-կենսափիլիսոփա Հովհ. Թումանյանի դեպքում: Հետևաբար հիմարության ֆենոմենի նրա դիտարկումներին պետք է վերաբերել իբրև մարդագիտության իր կոնցեպցիայի կարևորագույն բաղկացուցիչ: Դրանք նշանակալի են ոչ միայն սոցիոմշակութային կոնկրետությամբ՝ որպես «մերոնք»-ի (Հովհ. Թումանյան) նկարագրի և վարքագծի արտացոլում, այլ նաև իրենց ընդհանրացող իմաստով (ճշմարտություն բոլոր ժամանակների ու բազմաթիվ կենսական հանգամանքների համար):

Ասեմ նաև, որ նրա այս պրոբլեմատիկայի ստեղծագործությունների սկզբունքայնությունը և ասելիքի միանշանակությունն անշրջանցելի հարց են հարուցում: Չի՞ չափազանցում արդյոք հեղինակը, չի՞ անցնում անգամ գեղարվեստական գրականությանը բնորոշ ու թույլատրելի թանձրացումների պայմանականության սահմանը: Պարզ ասած՝ կարո՞ղ է մարդն այնքան հիմար լինել, ինչքան որ Հովհ. Թումանյանն է դա ցույց տալիս:

Այս հարցի պատասխանը պայմանավորված է քննարկվելիք ստեղծագործությունների կենսական ճշմարտացիությամբ և գեղարվեստական համոզությամբ: Ե՛վ առաջինը, և՛ երկրորդը կասկածի տեղ չեն թողնում թեկուզ և այն հանրահայտ իրողությամբ, որ նրանց բազմաթիվ հերոսների անուններն ու ապրած կենսական իրավիճակները մեր ամենօրյա զրույցներում դարձել են ամենքին հասկանալի սիմվոլներ (Քաջ Նազար, Ձախորդ Փանոս, Անբան Հուռի, մի կաթիլ մեղրի կամ ոսկու կարասի պատմություն և այլն): Իսկ զուտ հասարակագիտական առումով, ինչպես կաշխատենք ցույց տալ հաջորդիվ վերլուծությամբ, այդ ստեղծագործություններում հիմարության շեշտադրված տարբերակները փաստարկված են մարդագիտական ուսումնասիրություններով: Թեև այս դեպքում դա իմ նպատակադրումից դուրս է, բայց ասեմ, որ Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների կենսական ճշմարտացիության մեջ համոզվելու նպատակով կարելի է հիմարության նրա մատնանշած տարբերակները ստուգել՝ ճշտելու համար դրանց առկա-

Հիմարությանը բնորոշ բուժերանգի էֆեկտը Հովհ. Թումանյանն արտացոլել է բազմազան կերպարներով ու կենսական իրավիճակներով՝ «Անխելք մարդը» (1894), «Ոսկու կարասը» (1907), «Անհաղթ աքլորը» (1909), «Զախորդ Փանոսը» (1914): Այս հեքիաթներից յուրաքանչյուրն առանձնանում է հիմարության բուժերանգային գործառույթի յուրօրինակ մարմնավորումով: Թվում է, թե «Անխելք մարդը» հեքիաթի հերոսը պիտի որ լավ ապրեր, որովհետև ծույլ չէր: Բայց «...որքան աշխատում էր, որքան չարչարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում¹⁷»: Կենսական իրողության հեղինակային փաստարկը հուշում է այս մարդու համար կարևորագույն խնդրի առկայությունը, նաև այն, որ նա չի գտնում դրա լուծումը, այլապես չէր գնա Աստծո ոտքը: Ըստ էության՝ դա ինքնաբացահայտման ուղևորություն է, ուղևորություն դեպի իր ինքնությունը: Հետաքրքիրն այն է, որ այդ ընթացքում (և՛ գնալիս, և՛ հետ դառնալիս) իրեն բոլոր հանդիպածները գիտակցում են, որ գործ ունեն հիմարի հետ: Իսկ ինքը կյանքն ավարտում է՝ այդպես էլ չգիտակցելով իր հիմար լինելը: **Եվ դա օրինաչափ է, որովհետև հիմարը չգիտի, որ ինքը հիմար է:**

Միանգամայն այլ է Փանոսի հիմարության տարբերակի շեշտադրումը: Սա այդքան ապրած լինելով՝ բացարձակ անտեղյակ է նույնիսկ կենցաղային մակարդակի փորձնական իմացությունից: Ինչ ձեռնարկում է, փորձանք է դառնում իր գլխին: **«Զախորդ» մականունը ժամանակակիցների որակումն է՝ որպես Փանոսի համար ճակատագրական կանխորոշվածության բնորոշում: Մինչդեռ նրա դեպքում կանխորոշվածությունը ոչ թե իրենից անկախ հանգամանքների բերումով անհաջողությունների մեջ ընկնելն է՝ ձախորդ լինելը, այլ ուղղակի անհույս հիմար լինելը, որովհետև անգամ սոցիալական փորձով ձևավորված գիտելիքը յուրացնելու չափ խելք չունի:**

Ստեղծագործությունների այս խմբում որոշակիորեն առանձնանում է «Ոսկու կարասը»: Գտնված գանձի պատկանելությունը վիճարկող համազյուղացիների գերազնիվ սկզբունքայնությունն ու թագավորին (երկրային օրենսդիր և դատավոր) դիմելն անշրջահայեցություն-կարճամտություն է: Հիմարությանը սահմանակցող անշրջահայեցություն, որը հաղթահարելու սողունոնյան վճիռ-լուծումն առաջարկում են իմաստունները: Բոլոր դեպքերում, սակայն, սրանց վեճի սկզբունքն ազնվությունն է, չվաստակած ոսկուց հրաժարումը: Իսկ թագավորին չի հաջողվում անազնվությամբ տիրանալ իրեն չպատկանող ոսկուն: **Եթե չլիներ իմաստունների (սրանք վերին արդարության մեկնիչներն են) վճիռը, ապա այս գյուղացիները ոսկուց հրաժարվելու իրենց վճռականությամբ անպայման կանցնեին այն նուրբ սահմանը, որը բաժանում է ազնվությունը պարզամտությունից, սկզբունքայնությունը՝ հիմարի վիճակում հայտնվելուց:**

Իր խելքից տուժող հիմարի թումանյանական պատկերներում առանձին խումբ են այն հեքիաթները, որոնցում կենսական հանգամանքները հանդի-

17 Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, Եր., 1994 թ., էջ 167: Այսուհետ այս հատորին հղումները կտրվեն մեջբերմանը կից փակագծում՝ էջահամարի նշումով:

պաղրում են հիմարին ու խելոքին: Նկատի ունենալով հիմարի անկանխատեսելիությունը՝ գիտական գրականության մեջ խելոք և հիմար փոխհարաբերություն ենթադրող կենսական իրավիճակների համար ընդունված է նախազգուշացնող մոտեցումը: Բայց շատ ակնհայտ է, որ Հովհ. Թումանյանը ոչ միայն չի խուսափել այդպիսի սյուժեներից, այլ նաև հետևողականորեն առաջադրել է նման դեպքերի իր նախընտրած համոզմունք-լուծումը, որն ի օգուտ խելոքի է: Դրանում թերևս արտահայտվել է նրա լավատեսությունը մարդու ողջախոհության նկատմամբ: Բայց չպիտի նաև բացարձակացնել նրա այս սկզբունքը: Հիմարության պրոբլեմատիկայի նրա ստեղծագործություններում կյանքը դիտարկված է բազմազանության մեջ ու նաև փաստարկված հիմար-խելոք հանդիպադրման այն տարբերակը («Քաջ Նազարը») (1912), երբ հաղթող է դուրս գալիս հիմարը¹⁸:

Խելոք և հիմար փոխհարաբերությունը մարմնավորող թումանյանական հեքիաթներից են «Ճամփորդները» (1907), «Սուտասանը» (1907), «Խելոքն ու հիմարը» (1907), «Չախչախ թագավորը» (1907), «Տերն ու ծառան», (1907), «Բարեկենդանը», (1910), «Անբան Հուրին», (1911): Սրանցում միշտ էլ հաղթող-շահողը խելոք-հնարամիտն է, իսկ հիմարը՝ անգամ հանիրավի տուժողը: Բայց նույնիսկ դա էլ որևէ դրական վերաբերմունք չի ձևավորում տուժողի նկատմամբ, որովհետև նա տուժում է իր հիմարությունից: Օրինակ՝ «**Չախչախ թագավորը**» (1907) հեքիաթը, որը կառուցված է երեք առանցքներով: Մեջտեղում աղքատ-անճարակ, ոչ հնարամիտ, բայց բարեսիրտ ջրաղացպանն է, երկու կողմերում՝ հարուստ, բայց հիմար երկու թագավորները: Սրանց միջև գործող ակտիվ պերսոնաժը խելոք, հնարամիտ ու երախտագետ աղվեսն է: Սա է կյանքը կարգավորողը, հարաբերություններ ձևավորողը և բարիքին, վայելքին արժանիին որոշակիացնողը:

Այս հեքիաթում հիմարների ամենաբնորոշը կարճամտությունն է՝ լսածին չկասկածելը, ճշմարտության տեղ ընդունելը: Իսկ դա այդպես է շնորհիվ աղվեսի խելոքության, հոգեբանական մանիպուլյացիա գործադրելու հնարքների մեջ հմտության: Այսպես, օրինակ, նա թագավորների հետ խոսում է այնպիսի բաներից (հարստություն, ոսկի, մարգարիտ, արշավող զորք, սպանություն, թալան և այլն), որոնք հիպնոսացնում են նրանց: Այստեղ պատկերն ամբողջանում է այն իրողությամբ, որ սրանք թագավոր են իրենց սոցիալական ծագման և ոչ թե ունեցած արժանիքների շնորհիվ:

Հեքիաթների այս խմբում առանձնանում են հատկապես «**Տերն ու ծառան**» և «**Սուտասանը**», որոնցում խելոքները հաղթում են հիմարներին հենց նրանց դրած պայմաններով: Դրա արդյունքում հիմարները ոչ միայն կորուստներ են ունենում, այլ նաև բացահայտում իրենց հիմար լինելը: Իսկ դա իրենց համար առանձնապես ցավալի է, որովհետև մինչ այդ մեծամտացած են եղել իբր անմրցելի խելոքությամբ: Սրանց դրած պայմանները մյուսներին նետած մարտահրավեր են, որի ընթացքում փորձարկվում են և՛ իրենք, և՛ իրենց կեցության համակարգերը: Այս հեքիաթներում

¹⁸ Սա արդեն այլ կոնֆլիկտ է՝ միանգամայն ուրիշ լուծումով, որի մասին կասկի համապատասխան տեղում: Միայն նախապես նշենք, որ հաղթող հիմարը Նազարը չէ:

Հովի. Թումանյանն առանձնապես ընդգծված է մարմնավորել հիմարին բնորոշ անշրջահայեցությունը, մեծամտությունը, ինքնահիացումը և այլն: Եվ որքան շատ է դրանց չափաբաժինը, այնքան էլ համարժեք է նրա հերոսների ինքնօրինակ հիմարության բացահայտումը: **Սրանք չգիտեն, որ չգիտեն (հիմարներին բնորոշ օրինաչափություն) և մտավոր մրցակցության կշեռքի նժարին են դնում իրենց ունեցվածքի մի մասը:** Ակնհայտ է նաև ու օրինաչափ, որ սրանք տեր ու տիրական են իրենց պես հիմարների վրա, ինչը երևում է դրված պայմանների մեջ առաջին փորձարկվողների ճակատագրից: Սակայն երկու դեպքում էլ գտնվում են այն խելքները, ովքեր խստորեն պատժում են այս ինքնավստահ հիմարներին:

Հիմարության ֆենոմենի առումով այս երկու հեքիաթները նշանակալի են նաև հետևյալով: Սրանց հերոսներն իրենց իմաստնությանը չկասկածող ակտիվ դուրսաբուծուկներ են, ովքեր, ելնելով իրենց սոցիալական դիրքից ու հնարավորություններից, գաղափարներ են փորձարկում համակեցության վրա¹⁹:

Հիմարի անփոփոխ ցուցիչներից մեկն էլ անհասկացողությունն է՝ այլակարծությունը բացառող, ինքնավստահ անսխալականության համոզմունքը: Հիմնախնդրի թումանյանական դիտարկումներում այդ օրինաչափությունը ևս արտացոլված է («Գաբո բիծու շերամապահությունը» (1899), «Քեռի Խեչանը» (1910)):

Դա հիմարությունն է ինքնին, ինչպես որ կա, ճիշտ ու ճիշտ Գաբո բիծու օրինակով: Բոսակցությունը միանգամից բացելուց և նախապես մտածված տեքստը մի շնչով շարադրելուց երևում է, որ Գաբո բիծեն իր մեջ շատ է «զգել-բռնել» շերամի խնդիրը: Նա խոսում է համոզված, փաստարկում՝ ըստ իր իմացության ու տրամաբանության: Իրեն բոլորովին չի մտահոգում, որ «ուսում առած» չէ, բայց հեռակա կոիվ է տալիս ուսում առածների դեմ՝ վստահ, որ նրանք «աշխարհքից դուրս մարդիկ են» (67): Եվ անում է շերամի պատմությունը՝ ցույց տալու համար, որ ինքը միտք անող՝ մտածող է: Մինչդեռ իր պատմությունից ակնհայտ է, որ իրենց չիմացության սահմաններում արել են այն ամենը, ինչը չէր կարելի անել: Եղելությանը մասնակցի իրազեկությամբ թվարկում է շերամի կոտորվելու պատճառների իր ըմբռնումը, սակայն չի հասկանում, որ պատճառը հենց իրենց չիմացությունը՝ «ուսում առած» չլինելն է: **Փաստն օրինաչափ է այնքանով, որքանով որ տգիտությունը չի կարող ինքնազննող, ինքնաճանաչող լինել կամ արդյունավետ ռեֆլեքսիա ունենալ:** Դրա համար խնդրի պատճառը միշտ փնտրում է իրենից դուրս՝ մի այլ տեղ: Եվ այս ամենից հետո բոլորովին էլ զարմանալի չէ նրա գտած ամենաանհավանական ու ամենաանհամոզիչ եզրակացությունը. «...մեր երկրումը արեշումի ճիճուն անում չի, բան չի դառնում» (68): Ահա դրա նաև փաստարկ-հիմնավորումը. «Դե՛ զարմանալու ի՞նչ կա որ. երկիր կա՝ հավք չի ապրում, էնպես երկիր կա՝ ցորեն չի դուրս գալի...» (68): Մինչդեռ, ըստ Գաբո բիծու, ուսում առածներն այդքան պարզ ճշմարտությունը չեն հասկանում...

19 Պատմական փորձը նման դեպքերի համար բազմազան ելքեր է ցույց տվել ինչպես հիմարի, այնպես էլ փորձադաշտ դարձած համակեցության հետագա ճակատագրի առումով, ինչու՞մ կարելի է համոզվել և՛ մարդկության, և՛ ազգային կյանքի անցյալի ու ներկայի դիտարկումով:

Սա հիմարի կամա-ակամա, նույնիսկ ենթագիտակցական ստանդարտ վարքագիծն է, որի գիտական անվանումն է անհաջողության ռացիոնալացում, ինչը պետք է հասկանալ ոչ թե որպես տեղի ունեցածի պատճառների օբյեկտիվ գնում, որջախոհ ինքնագնում, այլ մեղավորների փնտրույք՝ հանուն ինքնաարդարացման: «Իր պատմածի և արած եզրակացության աղաղակող հակասությունը բոլորովին չի շփոթեցնում գյուղացուն, որովհետև շփոթվելու համար մարդ պիտի նկատի հակասությունը: Իսկ սա չի նկատում, որովհետև բնավ կասկած չունի, որ ինքն է իրավացին»²⁰: Այստեղ ճշգրիտ գործում է ասիական և եվրոպական մտավոր գործունեության այն տարբերությունը, որը մատնանշել է նաև Գ. Շեպետը. «Եվրոպան վերապրել է հեքիաթներ ու առասպելներ, իմաստություն ու հայտնություններ Արևելքից ոչ պակաս, բայց այն ոչ միայն դրանք վերապրում էր, այլև վերամտածում»²¹ (ընդգծումները մերն են – Ս. Ա.): Գաբո բիծան ոչ թե վերամտածում է (ռեֆլեքսիա) եղելությունը, այլ վերապրում՝ ենթագիտակցորեն փնտրելով իր ինքնաարդարացումը: Թեև նրա արածն էլ մտավոր գործունեություն է, բայց ռեֆլեքսիա չէ հաստատ: Նրա արածը շրջապտույտ է անհաղթահարելի բթամտության փակ տարածքում:

Ըստ պատումի ոճի՝ սա Հովի. Թումանյանի կենսափորձային-իրապատում ստեղծագործություններից է ու չնայած փոքր ծավալին՝ մարդագիտական գլոբալգործոց²²: Հայտնի ճշմարտություն է, որ մտածելն անկանխատեսելի արդյունքով գործունեություն է, որովհետև ենթակա չէ կամային վերահսկողության: Այդ գործունեությունը միանգամայն անցանկալի է դառնում հիմարի դեպքում, որովհետև գործընթացին միանում են անհաղթահարելի ինքնավստահությունը և անսխալականության համոզմունքը: Հետևաբար մտածելը հակացուցված է հիմարին, որովհետև դա նրան մղում է աներևակայելի մտահանգումների: «Իմ ընկեր Նեստն» (1914) պատմվածքում ևս կա դրա ակնառու դրսևորումը: Նեստյի նկատմամբ մարդասիրության մի քանի գործնական դրսևորումներից հետո պատումի հեղինակը ցավով եզրակացնում է. «... նա (Նեստն – Ս. Ա.) իմ արածը վերագրում է ոչ թե իմ բարեսրտությանն ու ընկերական զգացմունքին, այլ իմ հիմարությանը» (145): Ակնհայտ է, որ Նեստն ոչ միայն չի կարող մարդասեր լինել, այլև ի վիճակի չէ նույնիսկ իր համար արվածը ճիշտ գնահատել:

3. Հիմարությունը՝ համակեցական աղետ

Սա այն դեպքն է, երբ ոչ միայն դրսևորվում է համակեցական նորմատիվ հիմարությունը, այլ նաև ընկալվում իբրև օրինաչափություն: Այն նախորդից նրանով է տարբեր, որ այդ իրավիճակում խելոքներ կամ չկան, կամ էլ եթե կան, ապա նրանց ձայնն ու կարծիքը եղած-չեղած մի հաշիվ է, բանի տեղ չի դրվում:

20 Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Եր., 1966, էջ 147:

21 Շեպետ Գ., Իմաստություն, թե՞ բանականություն, Եր., 2018, էջ 11:

22 Իմիջիայլոց, գյուղացու ինքնահանգված համառությանը Հովի. Թումանյանն այլ առիթներով ևս անդրադարձել է: Մասնավորաբար Տեն Թումանյան Հովի., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6, Եր., 1994, էջ 29:

Սա մարդկային հիմարության վատթարագույն տարբերակն է և դրսևորվում է որպես ամբոխի կամք ու վարքագիծ՝ դառնալով համակեցության, ազգի ու երկրի ճակատագիրը կանխորոշող սոցիալական չարիք: Այդպես մասսայական հիմարությունը դառնում է ամբոխ ձևավորող, առաջնորդող կարևորագույն գործոն, նրա առաջնային բնութագրերից մեկը:

Հիմարության պրորբլեմատիկայի թումանյանական ստեղծագործություններում հասարակագիտական այս ճշմարտության արձանագրումը համահունչ է ու ժամանակակից եվրոպական գիտական մտքի ձեռքբերումներին: Դա շատ ակնհայտ է նոր և նորագույն ժամանակների արևմտյան փիլիսոփայական մտքի համայնապատկերից: Այդ ժամանակ այն լրջորեն լծված էր մարդու և զանգվածի նկարագրի ու վարքագծի խորքային իրողությունների, նոր ձևավորվող քաղաքային սևագործ մասսայի կենսակերպի, ստեղծած ու սպառած մշակույթի բովանդակության ու պատմական նշանակության բացահայտման գործին (Ֆ. Նիցշե, Գ. Լեբոն, Ջ. Ֆրոյդ, Օ. Շպենգլեր, Խ. Օրտեգա-ի-Գասետ, Է. Ֆրոմ և այլք):

Հովհ. Թումանյանը համակեցական կամ մասսայական հիմարությունը պատկերավորել է տարատեսակ նրբերանգներով: Դրանցից ամենամեղը «**Կացին ախպեր**» (1907) հեքիաթն է: Այստեղ համահավաք չիմացությունը չարիք է դառնում համակեցության համար: Կարող է թվալ, թե հեքիաթի ասելիքը միայն ու հենց դա է, որը հայտնի է որպես թևավոր խոսք. «Չիմացությունը չարիք է»: Բայց իրականում այն պարունակում է համակեցական հիմարությանը բնորոշ ավելի կարևոր ցուցիչ, որը հետևյալն է: Այս մարդիկ կացինը վերադարձնում են տիրոջը և ոչ թե ճշտում այն ի նպաստ իրենց օգտագործելու եղանակը: **Այլ կերպ ասած՝ իրենց այդ քայլով այս համակեցությունը նույնիսկ մատչելի, հնարավոր իմացությունից նախընտրում է իր փորձանքաբեր չիմացությունը:**

Մասսայական կամ սոցիալական աղետ դարձող հիմարության հատկանիշներից մեկն էլ վիրտուալ-երևակայական իրականության հիպնոս-հայլուցինացիան (**Դոբրովոլսկի 3.**) կամ **փսիխոզն է:** Սա շղթայական ռեակցիայի էֆեկտ ունեցող բացիլ է, որով վարակվածները վիրտուալ իրականությունն ապրում են, նրանում գործում, ինչպես կապրելին ու կգործելին ռեալության մեջ: Դրանից է, որ «**Կիկոսի մահը**» (1913) հեքիաթում բոլորը մի մարդու պես իրականացնում են ժառանգվող սոցիալական փորձով հեշտությամբ յուրացրած հոգեհանգստի ծեսը: Իրական ծես՝ երբևէ չեղած-չմահացած երեխայի համար:

Փսիխոզի ակնհայտությամբ մասսայական հիմարության մի այլ տարբերակ է ներկայացնում «**Մուկիկի մահը**» (1908) բալլադը, որում, սակայն, պատճառն իրական չնչին փաստի (մկնիկի մահվան) նշանակությունը չափազանցնելն է (մկնիկի մահով աշխարհն անտեր է մնացել): Եթե հասկանալի է, որ Մուկիկի ընկերոջ՝ Ծիտիկի համար նա իսկապես կարող էր մի աշխարհ արժենալ, ապա խելագարությանը համադրելի հիմարության պոթեկում է համակեցության միահամուռ ողբն ու կականը: **Հետևելով Հովհ. Թումանյանին՝ կարծում եմ՝ բոլորովին էլ սխալ չի լինի եզրակացնելը, որ թերևս ոչինչ չի կարող մասսային**

այնքան միադեմք (անդեմք) ու համախումբ դարձնել, որքան հիմարության վարակիչ պոռթկումը:

Թումանյանական մարդագիտությունն ունի համակեցական հիմարության ավերիչ դրսևորումների դիպուկ բացահայտումներ: Այդ առումով գլուխգործոց է **«Նեստոյի քարաբաղնիսը»** (1910) պատմվածքը: Զարմանալիորեն սեղմ այս ստեղծագործությունում առաջնային ողբերգությունը ոչ միայն անտեղի զոհի առկայությունն է, այլ նաև ինքնարդարացում գտած համակեցական հանցավոր հիմարության սառնարյունությունը: Ըստ այդ ընկալման՝ ինչ եղել, եղել է նորմայի մեջ՝ որպես նորմատիվ կեցության իրողություն: Նույնքան էլ նորմատիվ է եղածին անհաղորդ մարդասպանների պահվածքը: Սրանք կարողանում են անհոգի հեշտությամբ տարբեր, իրար հակասող փաստեր բերել՝ հոգուտ իրենց հանցագործության արդարացման: Բայց դա իրականում հիմարությանը բնորոշ մարդու մահվան պատճառն իրենցից անկախ այլ տեղում փնտրելու ինտուիտիվ մանիպուլյացիոն վարքագիծ է: **Թանձրամիտ մասսայական հիմարությանը բնորոշ պահվածք, որի արդյունքում, նույնիսկ հակառակ ճնշող փաստերի, նորից ու նորից կրկնվելու և ամրակայվելու է նույն սխալը՝ նույն արդյունքով:** «Տո դե ճակատի գիր ա, էլի, հո նրանց էլ (Կիրակոսից առաջ մահացածներին - Ս. Ա.) Նեստն չի խեղդել» (97):

Ահա այսպես համակեցությունը, Նեստից առաջ ընկած, ձևակերպում է նրա անմեղության կանխավարկածը: Սրան ինչ անուն էլ տրվի՝ «չքմեղացող անպատասխանատվություն»²³», «հոգևոր անմեղսունակություն»²⁴», թե որևէ այլ բան, ի վերջո դրանից էությունը չի փոխվում: **Դա անմեղսունակությանը սահմանակցող համակեցական անհաղթահարելի հիմարության վերածած տգիտության դրսևորումն է: Իրավիճակ, որում դժվար է նույնիսկ մարդու մահվան համար որևէ մեկին մեղադրելը:** Իսկ Նեստն այդ ընթացքում «լուռ, գլուխը կախ արած լսում էր ու չիբուխ էր քաշում» (97): Սա մարդու բազմախորհուրդ լուռության այն դեպքերից է, որը չի տրվում միանշանակ վերձանման: Սակայն ակնհայտ է մի բան. նա, եթե անգամ ծանր էլ է տանում Կիրակոսի մահը, միևնույն է, այդ դեպքից էլ որևէ եզրակացություն չի անելու: Ինչպես որ չի արել նույն տարբերակով նախորդ մահվան դեպքերին տեղյակ լինելուց: Իսկ հետոն պարզ է. ըստ ծեսի թաղելու են Կիրակոսին էլ ու շարունակելու են ապրել՝ չհասկանալով, որ իրենց կենսակերպին ամենաբնորոշը սոցիալական աղետ դարձած համակեցական հիմարությունն է:

Հովի. Թումանյանի այս և նախորդ ստեղծագործությունները լավագույնս արտացոլում են դարերով անշարժ-քարացած ժամանակներին ու կենսական հանգամանքներին բնորոշ համակեցական հիմարության էությունը: Յուրաքանչյուրն այդպիսի համակարգերում գիտի, հասկանում-կարողանում է նույնքան, ինչքան ողջ հանրությունը, ու չկա մեկը, որ տարբերվի: Հենց այդ պատճառով էլ սրանք չարիք արարող և իրենց արարած չարիքին բաժին դարձած ներփակ հիմար համակեցություններ են: **Սրանցում «ձայն բազմաց»-ը որակապես ողբերգականորեն**

23 Ոսկանյան Ա., Զարեցի ժամանակը, Եր., 2017, էջ 111:
 24 Հարությունյան Էդ., Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 7:

միասեռ է: Մի բան, որը թվացյալ բարիքի (միական, միակարծիք, միասիրտ լինելը) անթափանց հաստ շերտի տակ թաքցնում է հավասար չափով հասկանալ-կարողանալու ողբերգական էությունը՝ տգիտությունը: Այստեղ ակնհայտ է սոցիալական շաբլոն վարքագծով խնդիրներ լուծելու իրողությունը և ոչ թե կենսափորձի գնահատում-իմաստավորումն ու ըստ դրա՝ նոր լուծումներ գտնելու ողջախոհությունը²⁵: Մի բան, որի կրողը, որպես օրինաչափություն, լինում է ոչ թե նույնակարծիք համակեցությունը, այլ ուրիշ կարծիք ունեցող սթափ անհատը կամ փոքրամասնությունը: Մինչդեռ շատ ակնհայտ է, որ այդ համակեցությունում բոլորն են Նեսո. դա Նեսո համակեցություն է: Հետևաբար միանգամայն թերի է գլուխգործոց այդ պատմվածքի խորքին ոչ հասու այսպիսի մեկնաբանությունը. «Չնայած այստեղ Թումանյանի ծաղրը անողոր է, մեղադրող, բայց դա չի վերաբերում անհատ Նեսոյին: Վերջ ի վերջո նա ինչ մեղավոր է, բարի մտադրություն է ունեցել ու իր իմացածը գործադրել: Անողորք մեղադրանքը հասցեագրված է տգետ ու հետամնաց այն պայմաններին, ուր ապրում էին գյուղացիները²⁶»:

Ըստ այս բացատրության՝ կարելի է մտածել, որ պայմանները մարդկանցից բացարձակ անկախ ու անփոխելի ինչ-ինչ իրողություններ էին, երկնային պատիժ: Մինչդեռ շատ ակնհայտ է, որ այդ համակեցական հիմարության ցուցիչներից մեկն էլ հենց այն է, որ մարդիկ նույնիսկ չեն փորձում հասկանալ ու գնահատել իրենց կեցության իրողությունները: Նրանց կենսակերպը նման է կենսաբանական մեքենայի վարքագծի, որին շատ հարմար է գալիս Հիսուսի հուսահատ պոռթկումը. «Հայր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում²⁷»:

«Նեսոյի քարաբաղնիսը» պատմվածքի վերաբերյալ մի նկատառում ևս: Մշակութային իրողությունների օբյեկտիվ և ոչ թե արդիականացված մեկնաբանության համար ճիշտ գիտահետազոտական մեթոդը դրանք իրենց ժամանակի մեջ դիտարկելն է: Նշված պատմվածքին այդպիսի ելակետով անդրադառնալն անմիջապես հուշում է, որ գործ ունենք միգուցե անգամ հազարամյակներով կայունացած ավանդական-նահապետական իրականության հետ, որում համակեցության կազմակերպման կարևորագույն գործոններից մեկն էլ ծեսն է կամ կենսագործունեության շատ ու շատ ոլորտների ծիսականությունը: Իսկ դա անխախտ պայմանականությունների համակարգ է և ունի որոշակի բնութագրեր: Մասնավորաբար՝ հեղինակ, մտահղացող-ստեղծող չունենալը, արարողության կանոնակարգվածությունը, նրան բոլորի մասնակցությունը, համոզմունքը, որ ամեն ինչ ճիշտ է արվում և իհարկե իրական կամ խորհրդանշական զոհի առկայությունը²⁸: Հնարա-

25 Այլընտրանքը բացառող վարքագծի դրսևորումներ են նաև Մարոյի ամուսնությունը («Մարոն» (1887) ու Սարոյի սպանությունը («Ամուշ»), (1901-1902), որոնք, սակայն, հեղինակը դիտարկում է ոչ թե որպես զավշետ, այլ ողբերգություն: Սրանցում ընդգծված է ազգային ավանդական վարքագծի բացասական կողմը, որի դիտարկումը դուրս է այս հոդվածի նպատակից:

26 **Վարդանյան Ռ.**, Թումանյանի պատմվածքները, Եր., 1977, էջ 128: Այս տրամաբանությամբ (մարդը մեղավոր չէ, որովհետև մտադրությունը բարի է եղել) թերևս կարելի է արդարացնել նաև կաթոլիկ եկեղեցու ինկվիզիցիայի բացառիկ «մարդափրությունը»: չէ՛ որ նա էլ մարդկանց մեղավոր մարմիններն այրում էր հանուն նրանց հոգու փրկության:

27 Աւետարան ըստ Ղուկասի, գլուխ ԻԳ, համար 34:

28 Տե՛ս **Найдорф М.**, Введение в теорию культуры: Основные понятия культурологии, Одесса, 2005:

վոր չէ չնկատել, որ «Նեսոյի քարաբաղնիսը» պատմվածքում առկա են ծեսին բնորոշ հատկանիշները, որոնք բոլորն էլ կարևոր են Կիրակոսի ճակատագրի առումով: Մասնավորաբար՝ տեղի ունեցածին բոլորի մասնակցությունը, քարաբաղնիսն իբրև բուժամիջոց հղացած հեղինակի բացակայությունը և այլն, որոնք այդ ամենին՝ մասնակիցների խմբին և յուրաքանչյուրին, ազատում են պատասխանատվությունից: Իսկ ծեսն ավարտող նոտան՝ զոհաբերությունը, պահպանված է ճշգրիտ և ցավալիորեն խորհրդանշական չէ: **Սակայն նույնիսկ կենսապայմանները հաշվի առնելով՝ ըմբռնումով մոտեցումն էլ որևէ չափով չի մեղմում այս համակեցության աղետալի էությունը: Եվ բոլորին իրար հետ ու յուրաքանչյուրին առանձին չի ազատում եղած փաստերը վերլուծել-եզրակացություն անելու մարդ արարածի պարտավորությունից: Բայց նրանք այդպիսի գործառույթի սովոր չեն, որովհետև ինքնառեֆլեքսիան, վերլուծական միտքը բնորոշ չէ մասսայական հիմարությունը կենսակերպ դարձրած համակեցությանը: Սա հիմարության դասական այն տարբերակն է, որի մասին ասվում է, որ հիմարն իր սխալից չի սովորում:**

Մասսայական հիմարության արդեն միջազգային մասշտաբների աղետաբերության հրաշալի մարմնավորում է «Մի կաթիլ մեղրը» (1909) բալլադը: Այն Վ. Այգեկցուց վերցված միջնադարյան առակի մշակում է՝ կենսական իրավիճակների ու կերպարների դիպուկ մարմնավորումներով և խոսքի ոճավորումով: **Համակեցական վարակիչ հիմարության շղթայական կործանարար էֆեկտն այստեղ բացահայտված է անթերի:** Սակայն հարկ է նաև նկատել, որ մշակելով առակի տեքստը՝ հիմարության միջազգային աղետալի հետևանքների ցուցադրման հարցում Հովհ. Թումանյանը պահպանել է բնագրի հասարակագիտական իմացության մակարդակը: Մինչդեռ ակնհայտ է, որ միջազգային որևէ մարդագործոն աղետ չի սկսվել տվյալ ազգի կամ երկրի համար կենսական կարևորություն չունեցող մի կաթիլ մեղրի կարգի չնչին բանից: Պիտի ենթադրել, որ Հովհ. Թումանյանն այս դեպքում գնացել է այդ «զիջմանը»՝ ցույց տալու համար հիմարության ամենակործան պոտենցիալը:

Համակեցական հիմարության աղետաբերության թումանյանական մարմնավորումների առումով հարկ է նկատել նաև հետևյալը: Նա իմաստնորեն ցույց է տալիս, որ վիճակը մխիթարական չէ նաև այն համակեցություններում, որտեղ նույնիսկ կան մասսայական հիմարության բացիլով չվարակվածներ: Պատճառն այն է, որ այս դեպքում արդեն նրանց նկատմամբ աշխատում է «ծայն բազմաց»-ի արհամարհանքը կամ ուղղակի հարկադրանքը:

Այդ առումով նշանակալի է Հովհ. Թումանյանի «Քաջ Նազարը» (1912)՝ համակեցական նորմատիվ հիմարությունը ներկայացնող լավագույն ստեղծագործություններից մեկը: Ըստ շարադրման՝ հեքիաթի հերոսի վարքագիծը նման է կենսական արկածախնդրի խաղի: Այն սկսում է ակնհայտորեն վախկոտ ու անճարակ մեկը, ով, սակայն, արդեն հավատում է իր քաջ լինելուն: Նա իր այդ արկածախնդրության մեջ է ներքաշում նաև համակեցությունը՝ ականա փորձարկելով նրա համահավաք ողջախոհությունը: Նազարի սկսած խաղն իր նոր նկարագրի ու վար-

քազծի հայտն է համակեցությանը: Եվ շատ շուտով երևում են արդյունքները՝ որպես համահավաք հիմարության շղթայի օղակներ: Օրինակ՝ նայելով, բայց չտեսնելով իրենց դիմաց կանգնածին՝ բոլորը միանգամից տպավորվում են նրա դրոշի գրությունից: Ու մանավանդ հարսանիքի տեսարանում հեղինակը ստեղծում է այդ համակեցության ամբողջականությունը ձևավորող խորհրդանիշ կերպարների մի հանրագիտարան, որում մարդկային նկարագրերը զարմանալիորեն դիպուկ ու բնորոշ են, իսկ գործադրված հեղինակային խոսքը՝ նախանձելիորեն համառոտ ու պարզ:

Նշանակալին այն է, որ կեղծում են բոլորը, կեղծում հաճույքով ու ներշնչված: Դրանով նրանք մասնակից են դառնում հորինածո մի բանի, որով իրենց աչքում իմաստավորվում ու կարևորվում է իրենց խեղճ ու թշվառ գոյությունը: Ճիշտ է նկատվել, որ. «Թումանյանը ծաղրում է ամբոխային սնամեջ հոգեբանությունը, որը պատվանդան է դառնում անբովանդակությանը, ստեղծում հերոսներ ու մեծություններ, հասնում խելագար պաշտամունքի... բոլոր ժամանակներում»²⁹: Բայց խնդիրը միայն հոգեբանական չէ: Դա համահավաք հիմարության այն տարբերակն է, երբ հանուն խմբի մեջ լինելու՝ մարդը դրսևորվում է իր գիտակցված կամ ենթագիտակցական հիմարությունը: Պատահական չէ, որ տեղում ճնշվում են Նազարի «մի կարգին թուր» ու ծառաներ չունենալու (238-239) վերաբերյալ զարմացական հարցումները՝ սթափության առկայծումները, որոնք, թվում է, պիտի որ կանխելին կոնֆորմիստական էյֆորիան: Բայց ոչ: Սոցիոմշակութային դաշտ ձևավորող անհատներն անում են իրենց գործը, և դրանից տպավորված ժողովուրդը՝ ամենագետ-իմաստուն, ինքնավստահ, անսխալական, առարկություն չհանդուրժող «ձայն բազմացը», հոտնկայս ու միահամուռ խմում է Նազարի կենացը: Այսպես Հովհ. Թումանյանն անառարկելի համոզությամբ ի ցույց է դնում հիմարության կարևորագույն էֆեկտներից մեկը ևս՝ շղթայական ռեակցիայի կամ համակեցական համակարգի միտք, նիստ ու կաց ձևավորելու ուժը:

Այստեղ պիտի նկատի ունենալ նաև հետևյալ հասարակագիտական ճշմարտությունը. բոլոր ժամանակներում և համակեցություններում էլ «ձայն բազմաց»-ի ինտելեկտուալության միջինը միշտ էլ ցածր է եղել (ու լինելու է) ինտելեկտուալ փոքրամասնության մտավոր մակարդակից: Եվ երբ համակեցական խնդիրները լուծվում են՝ ըստ մեծամասնության կամքի ու մտավոր կարողությունների, ակամա դրսևորվորվում է ցածր մակարդակի իմացականությունը կրող «ձայն բազմաց»-ի բռնությունը փոքրամասնությունը ներկայացնող այն պրոֆեսիոնալ ինտելեկտուալների նկատմամբ, ովքեր օժտված չեն իշխանությամբ կամ չեն առաջնորդում «ձայն բազմաց»-ին: Հովհ. Թումանյանի ներկայացրած տարբերակը մի քիչ այլ է: Ակնհայտորեն երևում է, որ «Քաջ Նազարը» հեքիաթում բազմությանը մանիպուլյացիայի են ենթարկում տեղական իշխանավորներն ու հեղինակությունները՝ ձևավորելով մեծամասնության համակարծության մթնոլորտ:

29 Թամրայան Հր., Հովհաննես Թումանյան: Բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 512:

Մինչդեռ Նազարը չի կեղծում, այն է, ինչ որ կա: Նա ոչնչով չի խրախուսում- նպաստում իր շուրջը ծավալված հիստերիային, խաբեությանը, կեղծիքի պողթեկ- մանը, համակեցական հիմարության մեջ յուրաքանչյուրի հիմարության դրսևոր- մանը: Մինչ այդ նա ընդամենը մի բան է արել. փորձել է հաղթահարել իր անե- րևակայելի վախը և ապշահար է հարսանքավորների պահվածքից:

Եթե հարսանքավորները Նազարին տեսնելով են ինքնաներշնչանքով հիպնո- սանում ու դրսևորում իրենց հիմար լինելը, ապա հսկաներն ավելի հիմար են, որով- հետև այդ վիճակում են հայտնվում նրան դեռ չտեսած՝ ըստ լսածի: Թե այդպիսին են տարածաշրջանի տեր ու տիրական, հսկա ու համբավավոր այս եղբայրները, ա- պա դժվար չէ պատկերացնելը՝ ինչքան հիմար են այն հանրությունները, որոնք սրանց ենթականերն են:

Հսկաների հիմարությունն այլ երես էլ ունի. նրանք չեն կարող հասկանալ ի- րենց տեսածը (Նազարի բոյ-բուսաթը, հագուկապը, դրոշակի փայտին կպած սարսափահար դողալը և այլն), որովհետև իրենց ուղեղը մինչ այդ արդեն ըստ լսածի ծրագրվել է այլ կերպ, որում էականը Նազարով հիացած-սարսափածի հիպնոսացածությունն է: Սրանք աչքերով նայում են, սակայն ուղեղով չեն տես- նում:

Վագրի ու թշնամիների դեմ կռվի տեսարաններում էլ նույնն է: Բոլորովին էլ կարևոր չէ՝ մասսան ինչ է տեսնում: Նրանց արդեն ուղղորդում է ինքնաներշն- չանք-ինքնախաբեությունը, որով նույնիսկ իրենց արածը վերագրում են Նազա- րին: Ճիշտ այսպիսի դեպքերի համար է ասված, որ «...հիմարությունը ոչ միայն վարակիչ է, այլև աղետալի, քան որևէ համաճարակ³⁰»:

Մարդկային համահավաք հիմարության այս ողջ շքահանդեսի մեջ միակ սթափը, գիտակցությունից զուրկ կենդանին Նազարի ծին է, որը բնագոյաբար զգում է հեծվորի վախկոտությունը: Իսկ գիտակից լինելու ի բնե արտոնությամբ օժտված մարդիկ այդքանն էլ չեն տեսնում ու հասկանում:

Հակառակ սրանց՝ իր անցած ճանապարհի փորձով հասունացած Նազարն աշխարհի իրողությունները, մարդկանց վարքագիծը սկսում է տեսնել-գնահա- տել ըստ էության, ինչպիսին որ դրանք իրականում են, յուրացնում է իրեն հա- մարժեք պահելու որոշ հմտություններ:

Մարդուն և համակեցությանը բնորոշ նուրբ օրինաչափությունների թումանյա- նական հրաշալի հայտածումներից մեկի մասին ևս: Նա մարդկային համահավաք նորմատիվ հիմարության բացահայտման բանալին տեղադրել է Քաջ Նազարի կերպարում: Վախկոտ, մեծաբերան-պարծենկոտ ու ծույլ Նազարին կյանքը պար- տադրում է... արժանապատվություն: Եվ նա ի վերջո ընդունում է այդ մարտահրա- վերը՝ հեռանալով տնից և հրաժարվելով կնոջ հովանավորությունից: Դա դառնում է համակեցական հիմարության բացահայտման առիթը: **Նազարն առանց մտածե- լու անում է քայլեր, որոնց իմաստների բացատրությունները ստիպված են գտնել իր հետ հարաբերվող մարդիկ ու համակեցությունները: Այսինքն՝ նա, ինքն էլ դա**

30 Հախվերդյան Լ., նշվ. աշխ., էջ 399:

չգիտակցելով, իր լուռ ու մունջ պահվածքով և արարքներով շրջապատին ակամա առաջադրում է մտավոր խնդիրներ, որոնց լուծումների փնտրտույքը բացահայտում է այդ գործով զբաղվածների հիմար լինելը: Մտածական գործունեություն ենթադրող խնդիր առաջադրելը հիմարությունը բացահայտող միջոց է, որը բոլոր ժամանակներում գործել ու գործում է անվրեպ: Դա ստեղծում է մի իրավիճակ, որում չի կարող արդյունավետ լինել ստանդարտ դեպքերի փորձով մեխանիկորեն յուրացված հմտությունը³¹:

Հակառակ տարածված կարծիքի՝ Նազարը խորամանկ չէ: Նա կարեկցանքի արժանի չափով նախվ է ու անճարակ, բայց ոչ խորամանկ, որովհետև դրան համարժեք չափով խելոք չէ: Եվ դա ճիշտ է ստեղծագործության մտահղացման առումով: Նազարն իր ողիսականի ընթացքում չափտք է մտածի, որովհետև հենց մտածեց, կծախողվի: Անելով չմտածված քայլեր՝ հաջողում է, որովհետև գործունի նորմատիվ հիմարությունը կեցության սկզբունք դարձրած մարդկանց հետ, որոնց բնորոշ մտքի տարբերակը մի անուն ունի՝ համահավաք հիմարություն:

Կենսական օրինաչափությունների և մարդու ճանաչողության թումանյանական իմացության հրաշալի դրսևորումներից մեկն էլ Նազարի կերպարի զարգացման տրամաբանությունն է: Տնից ու կնոջից դժվարությամբ ու վիրավորված պոկվել-հեռանալով՝ Նազարի կյանքի պահը վերլուծելի է անգամ ըստ Զ. Ֆրոյդի ուսմունքի: Նրա հոգեվերլուծական դիտարկումներից մեկը՝ սնուցող մորից երեխայի պոկվել ու դեպի աշխարհ գնալու ապրումները, անճարակությունը և այլն համահունչ են Նազարի նկարագրին ու վարքագծին: Այսպես, իր տնից Նազարի հեռանալը, ըստ էության, հրաժարում է անցյալից ու նախկին կենսակերպից: Դրանից հետո անգամ նույն վախկոտը մնալով էլ՝ նա համարձակվում է գողանալ համազյուղացու էջը և որ ավելի կարևոր է՝ անգամ ճամփա գնալ: **Չգիտի՝ ուր, չգիտի՝ ինչու, բայց գնում է, որը որքան փորձություն է, այնքան էլ ենթադրվող կենսափորձ:** **Հենց միայն այդ գնալով նա կյանքի իներցիայով քայլողների (ինքնահոսի ապրողներ) բազմության մեջ ակամա դառնում է... ճամփա գնացող, ով հետո պիտի իմաստավորեր իր անցած ճանապարհի փորձը:** Եվ պատահական չէ, որ հեքիաթի վերջում նա արդեն փիլիսոփայող մեկն է: Գոնե իր կարողությունների սահմաններում նա մտածում է, փորձում հասկանալ կյանք ու աշխարհի դրվածքը: Ահա այդքանով էլ նա բարձրանում է իր շրջապատից:

Հեքիաթի բովանդակային պարադրքներից մեկն էլ Նազարի ձևակերպած կենսական ճշմարտության խորհուրդն է: «- Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունե՞ս՝ քե՛ք արա...» (245) բացատրությունը հալած յուրի տեղ կամ որպես հեղինակի ասելիք ընդունելը համարժեք է կյանքը, մարդուն, մարդկային համակեցությունը Նազարի

31 Սա շատ բնորոշ իրողություն է ցանկացած արարածի դեպքում: Օրինակ՝ գիշատիչները սովոր են նրան, որ իրենց գրեթե պիտի խուճապահար փախչեն իրենցից, որից հետո անելիք մեջ իրենք անմրցելի վարպետ են: Իսկ երբ հանդիպում են գրիի հակառակ պահվածքին, հանկարծակիի են գալիս՝ չիմանալով իրենց անելիքը:

մակարդակով հասկանալուն: Ցանկացածի կյանքում բարեհաջող պատահմունքի հավանականությունը չժխտելով հանդերձ՝ իրականում պիտի նկատի ունենալ, որ դա Հովի. Թումանյանի ճշմարտությունը չէ, այլապես «Քաջ Նազարը» հեքիաթի ասելիքը չէր լինի ծանրակշիռ այնքան, ինչքան որ է իրականում: Այս հեքիաթում հեղինակի ցույց տվածը մարդուն և մարդկային համակեցությանը բնորոշ օրինաչափություններն են, իսկ ասելիքը՝ դրանց խորքային դիտարկումից բխող իմաստությունները, որոնք բոլորովին տեղ չեն թողնում Նազարի հաջողությունները ըստ «հանգամանքների նպաստավոր դասավորության»³² կամ «բարեբախտ պատահականությունների»³³ բացատրելուն:

Ճիշտ հակառակը: Հովի. Թումանյանը մարդագիտական և հասարակագիտական խորաթափանցությամբ լիարժեքորեն փաստարկել է տվյալ համակեցական միջավայրում Նազարի անցած ճանապարհի ու ճակատագրի ոչ պատահական լինելը:

4. Հեղինակի կենսորոշումը

Մարդկային հիմարության թումանյանական դիտարկումները ստեղծագործական աշխատանքում դրսևորված պատահական հրապուրանքի կամ պարապ ժամանակը լցրած անցողիկ արդյունք չեն: Նրա կարճատև ու անհանգիստ-հոգսաշատ կյանքը լի է եղել հուսախաբություններով, մարդկության և հատկապես մեր ազգի ճակատագրի համար սոցիալ-քաղաքական բարդ, ողբերգական իրադարձություններով, անդառնալի անձնական կորուստներով: Տիեզերքում ամեն ինչի փիլիսոփայական իմաստի, գոյի խորհրդի փնտրտուքով ապրող Հովի. Թումանյանի համար դրանք վճռորոշ նշանակություն են ունեցել: Նրա այդ փնտրտուքը սկսվել է դեռևս երիտասարդական տարիքից և անընդհատ ծավալվել՝ առաջադրելով էքզիստենցիալ լրջագույն հիմնախնդիրներ: Դրանք որոշակի մոտավորությամբ կարելի է խմբավորել որպես հուսահատ-ողբերգական հարցում («Մի՞թե այս ամբոխն իմ եղբայրն է, տեր») («Ընտրյալը»), «մերոնք»-ի ոչ միայն ֆիզիկական, այլև հատկապես հոգեմտավոր թանձրամած թշվառության արձանագրում և փիլիսոփայական դառը եզրակացություն («Մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կըմնա...») («Հոգեհանգիստ»): Գոյաբանական ու մարդագիտական ահա այս շրջանակում են հիմարության ֆենոմենի թումանյանական արծարծումները:

Հիմարության և հիմարի նկատմամբ նրա վերաբերմունքը միանշանակ մերժողական է, որի առաջին ցուցիչն այդ պրոբլեմատիկայի ստեղծագործություններում մշտառկա երգիծանքն է: Դժվար է ցույց տալ Հովի. Թումանյանի մասնավանդ արձակի մասին որևէ լուրջ հետազոտություն, որը շարադրված լինի առանց ոճական այդ առանձնահատկության մատնանշման: Դրանցից առանձնապես կարևոր են

32 Հախվերդյան Լ., նշվ. աշխ., էջ 405:

33 Եղիազարյան Ա., Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները, Եր., 1990, էջ 94:

Էդ. Ջրբաշյանի և Լ. Հախվերդյանի դիտարկումները: Մեջբերենք մի քանիսը՝ «Թումանյանի երգիծանքի համար ամենից բնորոշ տարերքը հումորն է³⁴», «...նույնիսկ ... անվերապահորեն սատիրական երկերի մեջ տիրապետող է արտաքուստ բարեհոգի ու ներողամիտ պատմելաձևը, թեթև հումորային մթնոլորտ³⁵», նրա հումորը «ծիծաղելի ու ցավալի է միաժամանակ³⁶», գործադրած եղանակներից մեկն էլ «երգիծական ինքնապատումի հնարանքն է, երբ ծաղրվող անձը ինքն է «ձայն ստանում» և ուղղակի խոսում այդ ամենի մասին³⁷» (ընդգծումները հեղինակինն են- Ս. Ա.): Նաև՝ «Մեկ փառ-փառ ծիծաղ, երբ բանը վերաբերում է ուրախության վարպետ Հասանի հաղթանակին, մեկ ոչնչացնող ծիծաղ, երբ ներկայացնում է գեղջուկներին հարստահարող թավադին, արհամարհանքի ծիծաղ՝ իրենց հորինած վշտի վրա սուգուշիվան անող անմիտներին նայելիս, գոհունակ ծիծաղ՝ ագահ տիրոջը նեղը գցող ծառային հանդիպելիս, ներողամիտ ժպիտ՝ իր պնդերես հյուր քեռի Խեչանին հիշելիս, «վշտի ծիծաղ» Պոետի և Մուսայի հարաբերություններից խոսելիս, զվարթ քրքիջ՝ հայոց Մյունխաուզեն Սուտլիկ որսկանին լսելիս...³⁸» և այլն:

Ասվածին միայն հավելենք, որ, ինչքան էլ իրարից անբաժան, բայց երգիծանքն ու ծիծաղը չի կարելի ընկալել որպես նույնական իրողություններ: Անհրաժեշտ մի ճշտում ևս: Միանգամայն անտեղի է Հովի. Թումանյանի որոշ հեքիաթների («Ոսկու կարասը», «Տերն ու ծառան», «Քաջ Նազարը») երգիծանքին, ուրեմն նաև հիմարությունը մարմնավորող կերպարներին «սոցիալական և քաղաքական սատիրա» (ընդգծումը մերն է – Ս. Ա.) (735) հավելադրելը: Հովի. Թումանյանի երգիծանքը բացահայտում է տարբեր սոցիալական շերտերին բնորոշ մարդկային արատները, հատկապես՝ հիմարությունը: Նրա այդ մարմնավորումները միանգամայն զերծ են ինչ-ինչ գաղափարախոսական-քաղաքական իմաստավորումներից և ընդհանրապես մարդուն բնորոշիչ դիտարկումներ են: Պատահական չէ, որ նրա հիմարները (և՛ հեքիաթներում, և՛ պատմվածքներում) սոցիալական տարբեր շերտեր են ներկայացնում, անգամ նույն ընտանիքից են («Տերն ու ծառան», «Խելոքն ու հիմարը»), որի մյուս անդամը խելոքների դասից է:

Ինչևէ, ակնհայտ է, որ երգիծանքը Հովի. Թումանյանի արձակի պոետիկայի կարևորագույն առանձնահատկություններից մեկն է, ինչպես համառոտագրությունը, նկարագրականության գրեթե բացակայությունը, տեքստի ասելիքը առավելապես հերոսների խոսքով ու գործողություններով ձևավորելը և այլն:

Երգիծանքն իրականության իմաստավորման կերպերից մեկն է, ինչպես ողբերգականը, զավեշտականը կամ դրամատիկականը: Սակայն իրականության մեջ չկա ոչինչ միանշանակ երգիծական, ողբերգական և այլն: Դրանք արտացոլող սուբյեկտի իմաստավորումներն են և պայմանավորված են նրա ընկալումներով, կենսավործով, մասնավոր ու ազգային շահերով, վերջապես՝ ինտելեկտուալ մա-

34 Ջրբաշյան Էդ., Թումանյանի գրական ժառանգությունը, Եր., 2000, էջ 228:

35 Նույն տեղում, էջ 228:

36 Նույն տեղում, էջ 232:

37 Նույն տեղում, էջ 241:

38 Հախվերդյան Լ., նշվ. աշխ., էջ 387:

կարդակով: Այլ կերպ ասած՝ ինչը մեկի համար կարող է, օրինակ, անգամ ողբերգական լինել, չի բացառվում, որ մի ուրիշն ընկալի իբրև առօրեական նշանակության իրողություն³⁹: Որպես կենսական իրողությունների իմաստավորման մեջ իմաստավորող սուբյեկտի գործոնի կարևորության փաստարկ՝ կարելի է նկատի ունենալ թեկուզ և անտիկ երկու փիլիսոփաների՝ Հերակլիտեսի (6-5-րդ դդ. մ. թ. ա.) և Դեմոկրիտեսի (5-4-րդ դդ. մ. թ.) օրինակները: Ըստ ավանդույթի՝ առաջինը հայտնի էր որպես լացող, մոայլ, երկրորդը՝ ծիծաղող փիլիսոփա: Նրանցից յուրաքանչյուրը յուրովի էր իմաստավորում ու վերաբերվում մարդուն և նրա կեցությանը բնորոշ իրողություններին: Առաջինի համար դա ողբերգություն էր լաց ու տվայտանքի պատճառ, երկրորդի համար՝ միանգամայն հակառակը: Անհատական ու համակեցական հիմարության նկատմամբ Հովհ. Թումանյանի վերաբերմունքը միանշանակ է. դա երգիծելով բացահայտել-ժխտելու արժանի մարդկային արատ է:

Հիմարության ֆենոմենին նվիրված թումանյանական ստեղծագործություններում արտացոլված են կենսական բազմազան իրավիճակներ՝ առօրեականությունից մինչ անմեղ մարդու սպանություն, բայց այդ ամենը՝ միայն երգիծանքով, ծիծաղ հարուցող ժխտումով: Առաջին հայացքից դա կարող է գոնե որոշ դեպքերում տարօրինակ թվալ, որովհետև նրա այդ երգիծանք-ժխտումը վերաբերում է նաև նրանց, ովքեր իր «մերոնք»-ն են: Նույնիսկ ակնհայտորեն ենթադրելի ու հնարավոր դեպքերում ոչ թե կարեկցանք, ափսոսանք, ցավ հարուցող դրամա և ողբերգություն, այլ երգիծանք: Հենց դրանում ու այդպես է դրսևորվել Հովհ. Թումանյանի օբյեկտիվ վերաբերմունքը ոչ միայն ընդհանրապես մարդու ու կյանքի նկատմամբ, այլ նաև «մերոնք»-ին ու նրանց կենսական իրողություններին, որովհետև նրանք իսկապես արժանի են այդպիսի վերաբերմունքի: Նաև դրանով է արտահայտվել հեղինակի և նրանց պատկերացրած կյանքի, մարդու նկարագրի, կեցությունն իմաստավորող արժեքների տարբերությունը:

Այսքանով հանդերձ՝ դա հեղինակի ոչ թե հրաժարումն է «մերոնցից», այլ սթափ սիրո դրսևորումը, որի «ահագին բաժինը պարզապես **ներողամտություն է** կամ **խղճահարություն** (ընդգծումները մերն են - Ս. Ա.)»⁴⁰: Իսկ որ դա այդպես է, ինքն էլ է վկայել. «Բայց այդ կարգադրությունը (եկեղեցական կալվածքների բռնագրավման վերաբերյալ 1903 թ. ցարական հրամանը - Ս. Ա.) դուրս հանեց մեր ժողովրդին և մի անգամ էլ ցույց տվավ մեզ, թե որքան խավար ու ողորմելի բան ենք մենք, անգիտակից ու կույր մի ամբոխ, որ ո՛չ իրեն է հասկանում, ո՛չ շուրջը, ո՛չ լավը, ո՛չ վատը, ո՛չ չարը, ո՛չ բարին: Ես ականատես եղա դեպքերի, որոնք դարձյալ հաստատեցին, թե շատ տարբեր բաներ են մտածող անհատն ու բազմությունը, ժողովուրդը, որ իր մեջ պարունակում է ամեն, ամեն բան, ավելի շատ խավար, քան պայծառ. **բոլորովին տարբեր բաներ են, բայց կապված ճակատագրական կապով**⁴¹» (ընդգծումը մերն է - Ս. Ա.): Գրողն անթաքույց շեշտում է ժողովրդից, բազմությունից

39 Կենսական իրականության արտացոլման այս, մանավանդ երգիծանքի պոետիկայի առանձնահատկությունների վերլուծությունը տե՛ս մեր «Գուրգեն Մահարու արձակի պոետիկան» (Եր., 2011) գրքում:

40 Սևակ Պ., Երկեր երեք հատորով, հատ. 3, Եր. 1983, էջ 117:

41 Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 9, Եր., 1997, էջ 419:

ու ամբոխից ինտելեկտուալի (այդ թվում՝ նաև իր) և՛ դիստանցավորվածությունը, և՛ նրա հետ կապը: Երգիծանքի պոետիկայում արտացոլող սուբյեկտ և արտացոլվող օբյեկտ փոխհարաբերությունում դիստանցավորվածությունն անհրաժեշտ նախապայման է: Առանց դրա հնարավոր չէ մարդու էության և կենսական իրողությունների երգիծական իմաստավորումը ու արտացոլումը:

Հովհ. Թումանյանն իր կյանքը երբեք չի ապրել ժողովրդի ճակատագրից ու կեցությունից անկախ: Նա, ինտելեկտուալ էլիտայի մեջ լինելով, ցավով գիտակցել է ժողովրդի ու իր տարբերությունը («Մի՞թե այս ամբոխն իմ եղբայրն է, տեր»), պայքարել նրան բնորոշ անհատական ու համակեցական հիմարության դեմ, բայց և իր կյանքն իմաստավորել նույն այդ ժողովրդի ցավն ու հոգսը կրելով: Նրա համար դա «մերոնք»-ի ցավն ու հոգսն էր, որը չիմացության, տգիտության, հիմարության պատճառով հաճախ սահմանակցել է ողբերգությանը:

Թումանյանական ոճի մի նրբերանգ ևս: Եթե նրա երգիծանքն անգամ ունի էլ որոշակի ներողամտության շաղախ, ապա նույնը չի կարելի ասել տգիտության և հիմարության բացահայտումների վերաբերյալ: Դրանք ակնհայտ ընդգծումներով անզիջում մերժողական են. «Նա չի ավստում, չի էլ կարեկցում բուֆ, ապաշնորհ, անխելք մարդկանց, ինչքան էլ հուսահատական վիճակի մեջ լինեն...⁴²»: Միայն թե այս դիտարկումը պետք է լրացնել հեղինակի մարդկային ու ստեղծագործական նկարագիրն ամբողջացնող կարևոր մի նկատառումով: **Ճիշտ է, Թումանյանը առանց կարեկցելու է բացահայտում-երգիծում-ժխտում մարդու և համակեցության արատները, բայց որ նույնքան կարևոր է, նաև առանց չարախնդալու:**

Այսպիսին է Հովհ. Թումանյանի մարդկային ու փիլիսոփայական էությունը և վերաբերմունքը կյանքին ու աշխարհին:

Եզրակացություններ

Հիմարությունը մտքի տեսակ է ու վարքագիծ, որը բնորոշ է և՛ անհատին, և՛ մասսային: Այն մարդու մտավոր և վարքագծային հատկանիշ լինելուց բացի՝ կարող է դրսևորվել նաև որպես կոնֆորմիստի գիտակցված պահվածք կամ հիմարացվածի (խաբվածի) վիճակ: Բուն իմաստով՝ հիմարություն են և՛ առաջին և՛ երկրորդ տարբերակները: Առաջինի դեպքում դրա կրողը չգիտի, որ ինքը հիմար է և իր այդ որակը դրսևորում է հատկապես այն ժամանակ, երբ ստիպված է լուծել մտավոր՝ կենսական ոչ ստանդարտ իրադրության խնդիր: Երկրորդի դեպքում անհատը կամ մասսան ինչ-ինչ նկատառումներով, այսինքն՝ գիտակցաբար, դրսևորում է հիմարի վարքագիծ:

Ինչպես անհատական, այնպես էլ մասսայական հիմարությունն առավել վտանգավոր է այն ժամանակ, երբ դառնում է կյանքը վերակառուցող գործոն:

42 Հախվերդյան Լ., նշվ. աշխ., էջ 392:

Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների մշտական արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ նրանք մարդու և մարդկային համակեցության խորքային դիտարկումներ են, որոնցում էական տեղ ունի նաև հիմարության ֆենոմենը:

Այս պորբլեմատիկայի նրա ստեղծագործությունները մեծ մասով հեքիաթներ են, որոնցում նկարագրվածը, ճիշտ է, նույնությամբ երբևէ չի եղել, բայց հեքիաթն էլ հեքիաթ է այնքանով, որքանով որ նրանում նաև հիմարության վերաբերյալ ասվածը ճշմարտություն է բոլոր ժամանակների համար:

Թեև Հովհ. Թումանյանի իրապատում պատմվածքների առաջնային նշանակությունն իր ապրած ժամանակների հայկական իրականության, անհատ և մասսայական հայ մարդու ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեմտավոր կեցության թշվառության ցուցադրությունն է, բայց դրանցում ևս հիմարության ֆենոմենի հատկանիշներն օրինաչափ ու արդիական են բոլոր ժամանակների համար:

Հիմարության ֆենոմենը Հովհ. Թումանյանը չի բովանդակավորում ըստ ինչ-ինչ քաղաքական կամ սոցիալական նախապատվությունների: Նա հիմարությունը դիտարկում է որպես մտքի որակ, որը հավասարապես բնորոշ է տարբեր սոցիալական խմբերի մարդկանց, նույնիսկ նույն ընտանիքի անդամներից մի մասին: **Մեծ հաշվով հիմարությունը մարդու և մարդկային համակեցության ճակատագրական հատկանիշներից է:**

Հովհ. Թումանյանը հրաշալի գիտի ու մարմնավորել է հիմարության դրսևորման տարբերակներն ու ախտանշանները, որոնցով էլ պայմանավորված է այդ ստեղծագործությունների իմաստախոսական արդիականությունը: Նրա ստեղծագործություններում հիմարությունը մարմնավորողը (լինի անհատ, թե համակեցություն) իր էությունը բացահայտում է այն ժամանակ, երբ փորձում է լուծել կենսական ոչ ստանդարտ ինչ-որ խնդիր: Իսկ դա անհատի ու համակեցության մտածական կարողության ճշտման լակմուսի թուղթն է: Հովհ. Թումանյանի հեքիաթներում ու պատմվածքներում թեև անհատ խելոքը հաղթում է անհատ հիմարին, բայց դրան հակառակ՝ մասսայական հիմարությունը միշտ էլ հաղթող է դուրս գալիս: Այս առումով ևս նրա ստեղծագործությունները գեղարվեստորեն համոզիչ են, հասարակագիտորեն՝ ճշմարտապատում:

Հովհ. Թումանյանի շնորհիվ արդեն ճանաչելի հիմարության բացահայտումները չեն կարող ընթերցողի համար հիմք լինել մտածելու, որ ինքն ավելի խելոք է, քան այդ ստեղծագործությունների հերոսները: Մարդու և համակեցության վերաբերյալ Հովհ. Թումանյանի բացահայտած ճշմարտությունները տարածվում են նրանց վրա, ովքեր անողջախոհություն են ունենում միայն ծիծաղել-քամահրել հիմար հերոսներին՝ չմտածելով, որ նույն հիմարությունը (գուցե նույնիսկ ավելցուկով) բնորոշ է և իրենց:

Ի վերջո, բոլորովին էլ կարևոր չէ՝ մենք քարաբաղնիս ենք սարքում, թե՛ ո՛չ, կացնով բադ սպանելու փորձ անում ենք, թե՛ ո՛չ: Կարևորն այդ ստեղծագործությունների մարդագիտական իմաստություններն են, որոնցով էլ զարմանալիորեն արդիական են: Իսկ դրան հասու են լինում նրանք, ովքեր այդ ստեղծա-

գործությունները չեն կարդում միայն որպես ինչ-որ Փանոսի, Խեչանի, Նազարի և այլոց վերաբերյալ պատմություններ: Այլ գոնե գլխի են ընկնում, թե ինչ է տգետի ինքնահամոզվածությունը, կենսափորձից դաս չառնելը, անարժանին աստվածացնող կոնֆորմիզմը և այլն: Իսկ Հովհ. Թումանյանի ստեղծագործություններն այդպես կարդալու դեպքում դժվար չի լինի նաև հասկանալ, որ հաճախ մենք էլ նույնպիսի Քեռի Խեչան ենք, քարաբաղնիս սարքող Նեսո, Նազարին թագավոր դարձնող «ձայն բազմաց» (Հովհ. Թումանյանը կասեր՝ «խալխ») և այլն և այլն...

Ինչևէ: Թերևս ավելորդ չի լինի նաև նկատի ունենալ այս ամենի արդյունքում ինքնամատուցվող ճշմարտությունը, այն, որ թեև Հովհ. Թումանյանը գրել է հիմարության ու հիմարների մասին, բայց ո՛չ հիմարների համար:

Սերգեյ Ա. Աղաջանյան - գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է մշակույթի տեսության, հայկական մշակույթի պատմության, նորագույն շրջանի հայկական արձակի պոետիկայի հիմնախնդիրները: Հեղինակ է գիտական մենագրությունների, տասնյակ հոդվածների, բուհական ուսումնական ձեռնարկների, պատմվածքների և վիպակների:

Summary

THE PHENOMENON OF FOOLISHNESS ACCORDING TO HOVH. TUMANYAN

Sergey A. Aghajanyan

Key words – foolishness, anthropology, social science, individual foolishness, co-existing foolishness; task of mental solution, reflection, mental competition, conformity, fortune, satire, orientation.

The article analyses one of the most striking realities of a human – the embodiments of foolishness in the works by Hovh. Tumanyan based on cultural approach.

For the accomplishment of the study in the first part of the article (“His Greatness Foolishness”) the philosophical comments on foolishness, its peculiar features both as mentality and as reality of human behaviour are represented in general features. The article differentiates the expressions of individual and mass (crowdy) foolishness and involuntary and conscious (conformity) ones. As a result of all these, the characteristics of foolishness as a type of mind below the average level of coexistence and the peculiarities of fool’s behaviour are specified.

In the second part (“Stupidity as Boomerang”) the stories and tales by Hovh. Tumanyan presenting the individual foolishness are analysed. In the expression of

this version of the phenomenon of foolishness Hovh. Tumanyan with amazingly anthropological preciseness presented the following realities: the fool doesn't know that he is fool, the fool is unable to absorb even the least experimental coexisting knowledge, individual smart ones always win individual fools, the fool is characterised by insurmountable foolishness due to which he is unable of reflection, rationalises his mistake, blames the others and so on.

In the third part of the article (“Foolishness as a Disaster of Coexistence”) the works of the author that reveal the mass expression of foolishness and its effects are analysed. In these works Hovh. Tumanyan emphasises some realities typical for foolishness: psychosis of chain reaction or infectious influence, replacement of imaginative-virtual and vital realities, foolishness that neglects repeated life experience and borderlines with insanity, intuitive or calculated slavery and behaviour. For these and other reasons the masses realises with determination the foolishness of even criminal coexistence.

Through all these Hovh. Tumanyan underlines the most important precondition of expressing the foolishness. It becomes obvious both in its individual and mass versions when an individual or the coexistence tries to solve any mental problem.

All the analysed tales and stories are characterised by the high poetic level of fictional depiction typical for Tumanyan where satire stands apart. And here is seen the orientation and attitude of the author towards his presented heroes and realities: this very thing is analysed in the fourth part of the article (“The Author's Orientation”). The careful study of foolishness in Tumanyan's embodiments shows that by humouring, even principally rejecting the fools and foolishness the author never vaunts the ones who have that flaw which is the expression of his humanistic and philosophical essence.

The last part of the study – “Conclusions” summarises the results of the analysis.

Резюме

ФЕНОМЕН ГЛУПОСТИ ПО ОВ. ТУМАНЯНУ

Сергей А. Агаджанян

Ключевые слова – глупость, антропология, обществоведение, индивидуальная глупость, коэжизистенциальная глупость, умственная задача, рефлексия, умственная конкуренция, конформизм, судьба, комизм, жизненная установка.

В статье с применением культурологического подхода анализированы воплощения одного из наиболее присущих человеку явлений – феномена глупости, в сочинениях О. Туманяна.

Для целостности исследования в первом разделе статьи («Его величество глупость») в общих чертах представлены философские толкования глупости, присущие ей особенности как явления и в мышлении, и в человеческом поведении.

В статье различаются произвольные и осознанные (конформистские) проявления индивидуальной и массовой (свойственной толпе) глупости. В результате всего этого определяются также характеристики глупости как типа мысли ниже среднего коэксистенциального уровня, поведенческие особенности глупца.

Во второй части статьи («Глупость как бумеранг») анализируются рассказы и сказки О. Туманяна, в которых представлены проявления индивидуальной глупости. В этом варианте проявления феномена глупости О. Туманян с удивительной антропологической точностью представил следующие явления: глупец не знает, что он глуп; глупец не в состоянии освоить коэксистенциальное знание хотя бы из опыта; умные индивиды всегда побеждают глупых индивидов; для глупца характерно непреодолимое тупоумие, из-за которого он неспособен к рефлексии, рационализирует свою ошибку, обвиняет других и т. д.

В третьей части статьи («Глупость - бедствие в сосуществовании») анализируются произведения писателя, в которых выявлены массовые проявления глупости и их последствия. В этих произведениях О. Туманян акцентирует некоторые явления, присущие феномену глупости: психоз цепной реакции или заразного воздействия; взаимозамещение воображаемо-виртуальной и жизненной реальностей; не учитывающее повторяющийся жизненный опыт, граничащее с невменяемостью тупоумие; интуитивное или рассчитанное раболепие. По этим и другим причинам масса своим решающим голосом осуществляет даже преступную коэксистенциальную глупость.

Всем этим О. Туманян подчеркивает важнейшее предусловие проявления глупости. Как в своем индивидуальном, так и массовом варианте она становится очевидной, когда индивид или коллектив пытается решить какую-либо умственную задачу.

Всем анализированным сказкам и рассказам присущ высокий уровень туманяновской поэтики художественной изобразительности, в которой выделяется комизм. В этом и проявляется жизненная установка автора или его отношение к представленным им героям и действительности, чему и посвящена четвертая часть статьи («Жизненная установка автора»). Внимательное чтение туманяновских воплощений глупости показывает, что иронизируя, даже принципиально отвергая глупцов и глупость, автор никогда не усмехается над носителями этого порока, и в этом проявляется его человеческая и философская сущность.

Последняя часть исследования («Выводы») подводит итоги результатов анализа.

REFERENCES

1. **Agh'ajanyan S.**, Gurgen Maharu ardz'aki poetikan, Ye'r, 2011 **(in Armenian)**.
2. Avetarann ast Gh'ukasi, glux IG, hamar 34.
3. **Chipolla K.**, Osnovnye zakony chelovecheskoj gluposti, (ebook) <https://pomnizod.ru/...gluposti/kazlo-m-chipolla-osnovnoj-zakon-cheloveche...> **(in Russian)**.
4. **Dobrovol'skij Ja.**, Filosofija gluposti. Istorija togo, chto irracional'no, Xarkov, 2014 (ebook), /<http://www.e-puzzle.ru/> **(in Russian)**.
5. **Gurevich P.**, Glupost' – rodnaja sestra absurd, "Filosofija I kul'tura", 2014, N 5, <https://elibrary.ru/item.asp?id=21587291> **(in Russian)**.
6. **Harut'yunyan Ed.**, Mardkayin kecut'yan aylakerpumnerə, Ye'r, 2018 **(in Armenian)**.
7. **Haxverdyan L.**, T'umanyani ash'xarhə, Ye'r., 1966 **(in Armenian)**.
8. **Jrbash'yan Ed.**, T'umanyani grakan zh'ar'angut'yunə, Ye'r., 2000 **(in Armenian)**.
9. **Komarov S.**, "Patologija" ruskogo bytija, ili ruskaja glupost', "Vestnik permskogo universiteta", 2014, N 2 **(in Russian)**.
10. **Kovalevskaia Je., Sigaljuk V., Turchevskaia B.**, Glupost' kak fenomen bytija (ebook), www.pseudology.org/science/Glupost.html **(in Russian)**.
11. **Lebon G.**, Psixologija narodov i mass, M., 1995 **(in Russian)**.
12. **Muzil' R.**, O glupost'I, www.my-works.org/text_25865.html **(in Russian)**.
13. **Najdorf M.**, Vvedenie v teoriju kul'tury: Osnovnye ponjatija kul'turologii, Odessa, 2005 **(in Russian)**.
14. **Roterdamci E.**, Govq himarutyana, Ye'r, 1964. **(in Armenian)**.
15. **Sevak P.**, Ye'rker ye'req hatorov, hat. 3, 1983 **(in Armenian)**.
16. **Sh'epet G.**, Imast'yun, t'e banakanut'yun, Ye'r., 2018 **(in Armenian)**.
17. **Spirov E.**, Razum v okeane gluposti, "Filosofskaja antropologija", 2017, t. 3, n. 1 **(in Russian)**.
18. **T'amrazyan Hr.**, Hovhannes T'umanyan. Banastegh'c'ə yev' mtac'ogh'ə, Ye'r., 1955 **(in Armenian)**.
19. **T'umanyan Hovh.**, Yerkeri liakatar zh'ogh'ovac'u, hat. 5, Ye'r, 1994 **(in Armenian)**.
20. **T'umanyan Hovh.**, Yerkeri liakatar zh'ogh'ovac'u, hat. 5, Ye'r, 1997 **(in Armenian)**.
21. **T'umanyan Hovh.**, Yerkeri liakatar zh'ogh'ovac'u, hat. 6, Ye'r, 1994 **(in Armenian)**.
22. **Vardanyan R'.**, T'umanyani patmvac'qnerə, Ye'r., 1977 **(in Armenian)**.
23. **Vo'skanyan A.**, Charenci zh'amanaka, Ye'r., 2017 **(in Armenian)**.
24. **Ye'gh'iazaryan A.**, T'umanyani poetikan yev' nra zh'ogh'ovrdakan akunqnerə, Ye'r, 1990 **(in Armenian)**.